Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1855

Lucy
191 V

Въ библіотеку Лазаревскаго Института Восточныхъ Языковъ

Отъ Его Превосходительства Г. Христофора Акимовича Лазарева

1857 г.

2000

№ 5 — 2

Uffizio della B. Vergine.

ՆՈՒԷՐ ՍԻՐՈՅ

ԱՌ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ

ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

АРМЯНСКАГО ИНСТИТУТА
БИБЛІОТЕКА
ВЪ ВАРШАВѢ

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի տպարանի Ղազարեան

1854

1437

11300

28-191

Սեր. Հայրապետ Գրիգորի
Գեղ. Պուճ. Գիրքերի
ՀԱՅԿ-СОР Ա.
Ալ. Մասնիկյան
Գ. Սարգսյանների անվան

191-2001 5241
38 Ռ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս ջերմեռանդական աղօթադիրքը՝ իւր առանձին որդիական ջերմեռանդութեանը համար առ Տիրամայրն շարադրած էր մեր բարեյիշատակ բազմարդիւն Հ. Մկրտիչ Վարդապետը Աւդերեան, միանդամայն փափաքելով որ այս պզտիկ աղօթադրքոյս առ Տիրամայրն ջերմեռանդութիւնը օր ըստ օրէ աւելի աճեցընէ համազգի հաւատացելոց սրտին մէջը։

Սուրբ Աստուածածնայ պաշտօնասէր ջերմեռանդը՝ իբրու թէ Աստուծոյ շնորհաց դանձին բանալին

ձեռքը ունենայ՝ այնպէս միշտ իր հոգեւոր ու մարմնաւոր պիտոյից դարմանը կը գտնայ առ ամենագութ Տէրը ձեռքովը, որ որչափ աւելի ցաւով Գողգոթայ լերանը վրայ ծընաւ զմեզ յիւր որդիութիւն, այնչափ աւելի գթալից աչքով մեր վրայ կը նայի, ու հզօր բարեխօսութեամբը զմեզ կը պաշտպանէ. այն՝ որ ըստ արեւելեան ու արեւմտեան եկեղեցեաց ազգու բացատրութեանը՝ Աստուծոյ ամենամերձ ամէն արարածական էակներէն վեր է, ու Աստուծմէ միայն ստորին: Աւելորդ կը սեպենք երկայն յորդորանքներ ընել սուրբ Աստուածածնայ Ջերմեռանդութեան շարժելու աղօթասէր հաւատացեալքը, որովհետեւ չէ թէ միայն այս փրկաւէտ Ջերմեռանդութիւնը մեր ազգին

մէջ գուցէ ամէն ազգէն առաջ սկը-
սած է Բարթողիմէոս Առաքելոյն
ձեռքովը՝ Հոգեաց վանքին մէջ կու-
սանուէր հաւատաւորաց բարեբա-
նութեամբքը, հապա նաեւ գիտենք
որ չկայ սուրբ Աստուածածնայ դի-
մող մը որ ձեռնունայն դարձած
ըլլայ։

Ստորգելիք սուրբ Կուսին.

Ա յս ՍՒՐՈՑ ՆԱՒԷՐԸ սուրբ Ա-
ստուածածնայ այն անուանցը վրայ
յարմարցուցած է, որով սուրբ Ե-
կեղեցին կը փառաւորէ զՏիրամայ-
րը, ու կ'ըսուին Ստորգելիք սըր-
բոյ Կուսին։ Որովհետեւ շաբթուն
եօթը օրուան վրայ բաժնուած է
այս աղօթագիրքը, սուրբ Աստուա-
ծածնայ եօթը գլխաւոր ստորգե-
լեացը վրայ շինուած է, և ասոնք են.

Աստուածածին, Կոյս, Մարիամ, Բևերկրևալ, Օրհնևալ, Ծնող փրկչին, Մայր ողորմութեան.

Այս եօթը ստորոգելեաց ամէն մէկը այլ և այլ կերպով խրատքանչիւր օրուան աղօթքներուն մէջը կը բացատրուի. յիշելով միանգամայն ամէն մէկ օրուան խորհուրդը, զորն որ Հայաստանեայց եկեղեցին շաբթուն ամէն մէկ օրը կը յիշէ:

Կիրակի օրուան ստորոգելիքը՝ Ապուածածին, յիշելով միանգամայն Յիսուսի սուրբ յարութեան խորհուրդը:

Երկուշաբթուան ստորոգելիքը՝ Կոյս, յիշատակաւ անմարմին հրեշտակաց, որոնց որ թագուհին է:

Երեքշաբթի՝ Մարիամ, յիշելով նահատակաց ու մարգարէից, որ այլ և

այնմանութիւն զինքը դուշակեցին։

Չորեքշաբթի օրուան ստորոգելիքը՝ Բեերէլ, միտք բերելով Գաբրիէլ հրեշտակապետին բերած աւետման խորհուրդը։

Հինգշաբթի օրը՝ Օրհնեալ, անուամբը՝ կը յիշենք իր որովայնին օրհնեալ պտուղը, որ 'ի սուրբ հաղորդութեան մեզի անմահութեան հաց պարգեւեցաւ։

Ուրբաթ օրը՝ յիշելով Ծնողք Փրկչին անունը, միտք կը բերենք թէ իր խաչելեալ որդւոյն խաչակից ըլլալով՝ գործակից եղաւ մեր փրկութեանը, միանգամայն իր հզօր բարեխօսութեամբն ալ ազատարար ննջեցելոց։

Շաբաթ օրը՝ յիշելով թէ Մայր ողորմութեան է, կը վառուինք իր մայրենի գթութեանը ապաւինիլ.

յիշատակելով միանգամայն զամենայն սուրբս, որոնց է տիրուհին։

Այս ալ հարկ կը համարինք յիշեցընել՝ որ այս աղօթագիրքը գրեթէ բառ առ բառ քաղած է Ճարականէն, սուրբ Գրիգոր Նարեկացիին խօսքերէն, ու Գանձարանի ու Տաղարանի երգերէն. որոնց մէջ սուրբ Աստուածածնայ գովասանութեան անհատնում գանձ կայ։ Վերջը աւելցուցած է քանի մը աղօթք՝ 'ի նախնեաց առեալ։

Յուսանք յողորմութիւնն Աստուծոյ որ այս համառօտ աղօթագիրքը առատ ջերմեռանդութեան պատճառ ըլլայ 'ի փառաւորութիւն անուան մեր Անարատ Մօրը, որ էր միակ փափաք սրտի յօրինողին, և հիմա նաեւ տպագրողացս։

ՆՈՒԷՐ ՍԻՐՈՅ

ԱՌ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԿՈՅՍ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ

ԿԻՐԱԿԷ

ՍՏՈՐՈԳԵԼԻՔ ԱՒՈՒՐՍ

Ոչրախ չեր և. բերկրեա Մայր և. Կոյս, քանզի ծնեալն 'ի կոչ-ակ՝ այսօր վերատուն յարուցեալք ծնաւ 'ի կոյս գերեզմանեն.

ԱՌԱՒՕՏԻՆ

Քարոզ.

Սիոնի որդիք զարթիք, մօրն լուսոյ տուք աւետիք, եթէ որդին քոյ յարուցեալ՝ յաղթեաց մահու

ի՛շխանութեամբ. գայ պատակէ զքեզ փառաւոր. եւ ընդ առաջ լի բերկրանաւք. ցնծա՛ ի տես քո միածնին, և վայելեա՛ ի սէր նորին։

Հրեշտակն աւետէր կուսին Մարիամու. Մա՛յր խաչեցելոյն, զի՞ լաս զանդրանիկդ. ահա Քրիստոս փառաւոր մեծաւ յարեաւ։ Յարեաւ փառաց Թագաւորն. յարեաւ հաւն արմաւ՝ արթուն բնութիւն՝ կենդանին յաւիտենից Քրիստոս։ Ահա յարուցեալ է սէր քո, ո՛վ սիրոյն սիրող, մայրդ սիրական։

Գոչէր սէրն առ մայրն քաղցրիկ ձայնիւ. զի՞ լաս զիս մեռեալ զյարութիւնս և զկեանք. խնդա, Մարիամ, ընդ փառս անդրանկիդ. ես եմ որդիդ միածին. ես եմ կենդանին Յիսուս։

Աղօթք.

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ պարգեւեա երկր-

պաշտուացս ամենասուրբ Երրորդութեանդ՝ զյարութիւն յուսոյ կենացն յաւիտենից։

Դու ես Քրիստոս կեանք և յարութիւն ազգի մարդկան, որ եկիր 'ի փրկութիւն մարդկան ծննդեամբ կուսին Մարիամու, և կենդանարար քո յարութեամբդ հրաւիրեցեր զմահացեալսն 'ի յարութիւն անմահութեան. վասն որոյ աղաչանօք մեր քոյ կեցո զմեզ փրկիչ։

Յոյս յարութեան մերոյ, աղբիւր կենաց և փրկութեան, որ յարեարդ 'ի մեռելոց, նորոգեցեր զազգս մարդկան, սրբուհւոյն աղաչանօք հաստատեա զհիմունս եկեղեցւոյ քո սրբոյ՝ միշտ անշարժ պահեալ յաւիտեան։

Օրհնութիւն Կուսին.

Յարուցելոյն 'ի մեռելոց բնակալսն՝ մայր և կոյս, որ ծնանիցեալսն յԱդամայ կենադործէ անապական.

զքեզ մեծացուցանեմք՝ որ օրհ-
նեալդ ես 'ի կանայս։

Ուրախ լեր և բերկրեա մայր և
կոյս, քանզի ծնեալն 'ի կուսէդ՝
այսօր վերստին յարութեամբ ծնաւ
'ի կոյս գերեզմանէն. զքեզ բարե-
բանեալ մեծացուցանեմք։

Ցնծա և զուարճացիր հարսն 'ի
յերկրէ երկնից. քանզի այսօր եր-
կնայնոցն ելեալ տային քեզ աւե-
տիս յարութեան միածնի որդւոյ
քո. զքեզ բարեբանեալ մեծացու-
ցանեմք։

Ուրախացիր Աստուածածին,
դուստր լուսոյ՝ մայր միածնին. զորք
հրանիւթից միաբանին, յաջ և յա-
հեակ քո սաւառնին. տան աւե-
տիս, կոյս տիրածին, յարեաւ որ-
դիդ, մայր անմահին։

Ուրախ լեր և բերկրեա մայր խաչե-
ցելոյն, և ծնօղ անմահին քո մահա-
ցելոյն. ընդ երեկեան քո արտա-
սուելոյն, այսօր խնդա վասն յա-
րուցելոյն. որ յարեաւ փառաք հզօր

զրաբդոյն, որպէս ծանոյց քեզ յա-
ռաջագոյն։

Ուրախացան աղդք երկրածին
համօրէն՝ ընդ յառնել միածնիդ 'ի
գերեզմանէն՝ քեզ ուրախակից են,
և երանեն. և քեզ առ որդիդ մաս-
չել աղերսեն։

Մեծացուցէ անձն իմ զտէր, և
ցնծացէ հոգի իմ Աստուծով փրկ-
չաւ իմով։

Այց արար 'ի վերայ խոնարհու-
թեան աղախնոյ իւրոյ. այսուհետեւ
երանիցեն ինձ ամենայն աղդք։

Արար ընդ իս մեծամեծս հզօրն.
և սուրբ է անուն նորա։

Ողորմութիւն արար յազգաց յազ-
գըս երկիւղածաց իւրոց, և արար
զզօրութիւն բազկաւ իւրով։

Ցրուեաց զամբարտաւանս 'ի մը-
տաց սրտից, և քակեաց զհզօրս յա-
թոռոց։

Զխոնարհս բարձրացոյց, զկարօ-
տս էլից բարութեամբ, և զմեծա-
տուն արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ՝ յիշելով զողորմութիւն իւր։

Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ ընդ Աբրահամու և զաւակի նորա յաւիտեան։

Աղերս առ Աստուածածինն.

Արդ աղաչեա, մայր Աստուծոյ, զծնեալն 'ի քէն վասն մեր, զի ընդ նմին թաղելով՝ սուրբ յարութեամբ նորա նորոգեսցուք. առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ։

Որ զկեանքն անմահարար մահկանացու բնութեանս 'ի քեզ կրեցեր սուրբ կոյս Մարիամ, որով մեռեալքս որք յԱդամայ՝ կենդանացաք յուսով յարութեան. առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց։

Բարեխօսեա առ միածինն յարուցեալ 'ի մեռելոց, մայր Աստուծոյ, փրկել զանձինս մեր 'ի յաւիտենից 'ի հրոյն, աղաչեմք զքեզ։

Արդ՝ կոյս Մարիամ, մայր յաւրուցելոյն, փառաց Թագուհի դրշխոյ բարձրելոյն. ձայն արկեալ մաղթեմք զմայրդ աստուածընկալ, զաղերս աղօթից սրտից մեր ընկալ, աղաչեմք։

Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի՝ և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր, ամենակալ տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։

Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին անարատ ծնողի միածնի որդւոյ քո, և աղաչանօք ամենայն սրբոց քոց, (և որոց այսօր է յիշատակ)։ Լուր մեզ տէր և ողորմեա, ներեա, քաւեա և թող զմեղս մեր։ Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հայր մեր. Ողջոյն քեզ։

ԵՐԵԿՈՅԻՆ

Քարոզ.

Ընդ որդւոյն միածնի յարուցելոյ՝ զմայրն ամենօրհնեալ Մարիամ զվերափոխեալն յանպատում 'ի կեանս, գովելով բարձր արարէք զնա յաւիտեան։

Սերոբէից գունդք հիացեալ՝ յորժամ տեսին զտէրն ելեալ 'ի փոխումն Աստուածածնին՝ անապական և միշտ կուսին. զարհուրեալ զայս ասէին. օրհնեա՛լ ես սուրբ Աստուածածին։

Այսօր զբնակարան հոգւոյն սրբոյ վերնական հրաբուն սեռիցն փոխադրեալ յերկինս, մտանելով 'ի վերին Երուսաղէմ 'ի յառաջատն անապական՝ յանմոռանելին եղակացնացս ընդ Երրորդութեանն։

Տօնելով զյիշատակ կուսի՝ աստուածորդւոյ մօր՝ հրճուին հրեշ-

տակք 'ի յերկինս, և ցնծան դասք առաքելոց և մարգարէից ընդ կուսական տօնս. յորոյ 'ի պատիւ ցընծասցուք և մեք յօրհնութիւնս հոգեւորս։

Աղօթք.

Որ մահուամբ քո կեցուցեր զմեզ, և յարուցեալ համբարձար առ հայր 'ի յերկինս. նոյն ինքն երկնաւոր զօրօք ելջեր 'ի փոխուիմն մօր քո և կուսի, հայցմամբ ծագողին լուսոյդ և մեզ ողորմեաց։

Անակիզքն Աստուած անհասանելի բնութիւն, և հանգուցեալ 'ի հրեղէն կառս. վասն որոյ գովելով ասեմք, օրհնեալ ես հայր անակիզքն Աստուած։

Մարգարտատեսիլ և ծիրանազգեաց հրաշափառագոյն կոյս. զոր առեալ Որդւոյ՝ վերափոխեալ դասեաց յանպատում 'ի կեանս, վասն որոյ գովելով ասեմք՝ օրհնեալ ես որդի միածին Աստուած։

Անհասանելի հոգւոյն զօրութիւնն, որով փարեալ համատարած լոյսն զկուսական անձամբն, վերափոխելով յանպատմելի և յանհասանելի և յանանց լոյսն. վասն որոյ բարեբանելով ասեմք, օրհնեալ ես հոգիդ Ճշմարիտ Աստուած։

Օրհնութիւն Կուսին.

Ուրախ լեր կոյս անարատ՝ մայր անհարսնացեալ. քանզի որ 'ի քէն ծնաւ որդին միածին, վայրիջեալ յերկնից յերկիր՝ վերածեաց զքեզ սքանչելի փառօք։ Վեհագոյն Սերոբէից և բարձրագոյն Քերոբէից վերհամբարձար 'ի բարձունս յեղականաց անհպելին, փառաւորեալ ընդ միածնին հրճուողական ձայնիւ երգոց։

Որ 'ի կուսական դասակցութեանց և 'ի սրբոց ճգնաւորաց փառաբանիս սրբուհի. ուստի և մեք հաւատացեալքս վերապատուեմք

զփոխումն քո 'ի յերկինս, որ առաւել բարձրացեալդ ես յաւիտեան։

Զբարեբանեալդ անդադար միշտ 'ի վերին զօրաց, և զվերափոխեալդ 'ի դասս առաքելոց և մարգարէից։ ընդ որս և մեք հաւատացեալքս վերապատուեմք զքոյին Աստուածամայր զՀանգստեան տօնս, որ առաւել բարձրացեալդ ես յաւիտեան։

Անարատ տաճար և առագաստ լուսոյ, մայր անհարսնացեալ Աստուածածին միշտ կոյս։

Դուռն արեւելեան ադին դրախտին բացօղ, և արեգականն արդարութեան ծագօղ։

Զքեզ մայր սուրբ որդին քո միածին եկեալ, փոխադրեաց յերկրէ 'ի յերկնային խորանսն։

Հիացեալ տեսին իմանալեացն դասք, մարմին հողեղէն վերասլացեալ յերկինս։

Քեզ առ պատիւ ընթանային յառաջ, գունդք սերովբէից թեւաքօղեալ դիմօք։

Զքեռ քառակերպիցըն հոյլքն ակումբ առեալ, սպասաւորէին հրեշտակական երամքն։

Դու 'ի յերկնաձեմ յաստուածակերտ խորանն, զանազան փառօք պայծառացեալ մտեր։

Վառեալ մշտափայլ լուսով, երկնագնաց եղեալ մարմնով. մաքուր և անախտ հոգւով, մայր Մանուէլի՝ սուրբ կոյս։

Իսկուհի երկնային կենդանեաց գաւառին, որ զկենցաղոյս ընթացս ընդ լուսազարդ կենացն շաւիղ ձգեցեր. և ըստ նմանութեան արագման օդային թռչնոյ 'ի յանցաւորաց աստի փոխեցար. և 'ի մէջ դասուց հրեշտակաց՝ ունող Աստուծոյ յայտնեալ ծանուցար. և լուսարփի ամպով առ 'ի նոցանէ պատուեալ համբարձար. և հողեղէն հաստուած 'ի քրովբէից աղի հանդուցար. և երագ ընթացիւք հետոց հեռացեալ 'ի վայրն անմատոյց՝ յարփին վերին ընծայեցար սուրբ Աստուածամայր։

Արդ եկեղեցի դասուց անդրան-
կաց զ'ի քէն մարմինն՝ 'ի բանէն ան-
անջատ՝ համապատիւ հօր փառա-
ւորէ յերկիս սրբասացս, առ որ
հպաւոր քո գոլով՝ ահաւոր խոր-
հրդոյդ տեսօղ՝ զանձառն ուրախու-
թիւն յաւէտ վայելես :

Աղերս առ Աստուածածին.

Քեզ միայնոյ մօր և կուսի մաղ-
թեմք՝ հայցելով 'ի քէն, բարեխօ-
սեա անդադար առ որդիդ քո և
Աստուած մեր, փրկել զմեզ'ի փոր-
ձութենէ և յամենայն վտանգից
մերոց :

Որ յիմանալի խորանագ բարձրա-
ցոյց զքեզ, մայր Աստուծոյ, ան-
ձառելի փառօք միածին Որդին,
առ նա միշտ բարեխօսեա վասն ան-
ձանց մերոց :

Գլխաւորեալ այսօր 'ի քեզ զի-
մանալեացն փարթամութիւն, որ
սլացեալ հասեր 'ի բարձունս եր-

պահելանարատ մինչեւ յօր երեւելոյ գալստեան իւրոյ. աղաչեմք։

Մայր սուրբ բարեխօսեա։

Աղաչեա վասն մեր սրբուհի զմիածին քո զորդին, և վասն հոգւոցն հանգուցեալոց՝ ընդունել յարքայութիւն երկնից, և տալ մասն և բաժին ընդ սուրբս ամենայն. աղաչեմք։

Ցիշեա տէր և ողորմեա։

Եւ եւս առաւել զյորդորումն սիրոյ և զգործս բարեաց պարգեւել մեզ խնդրեմք։

Տուր մեզ տէր Աստուած մեր։

Զանձինս մեր և զմիմեանս տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։

Քեզ տեառնդ յանձն եղիցուք։

Ողորմեաց մեզ տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա, տէր ողորմեա. մայր սուրբ բարեխօսեա առ տէր վասն մեր։

Ներբող Աստուածամայրութեան Մարիամու.

Յարմարեալ ձայն ներբողի՝ յու-
բախութեան օր քո ածնի, 'ի յարու-
թեան քո միածնի՝ և 'ի փրկանագ-
ութիւն ծնողի, քեզ երանեմք ըստ քում
ձայնի՝ զի մայր եղեր անձառ հանի:
Անակղբնական հանին հօր բնա-
կարան, տաճար և առագաստ, տե-
ղի անտանելի լուսոյն. զքեզ մեծա-
յուսցանեմք արժանապէս երգով՝
Աստուածամայր և կոյս:
Զքեզ կոյս և մայր՝ և բնակարան
աստուածային ներմարդութեան՝
գոհաբանեմք և վերօրհնեմք զե-
զեալ փրկիչ կենդանութեան ազգի
մարդկան. վասն որոյ զքեզ Ա-
ստուածածին և կոյս, բարեբանեմք
զմայր և զաղախին փրկչին մերոյ:
Զքեզ լուսոյ մայր և կոյս, զքեզ
զանձդ կենաց աստուածային, ձայ-

191-2001

նիւ ցնծութեամբ մեծացուցանեմք։

Մայր սուրբ անարատ լուսոյն, հրեշտակային օրհնութեամբ պատուեալ զքեզ մեծացուցանեմք։

Խորհուրդ կենաց և մայր կենդանութեան և առագաստ հրաւիրեալ ծագմամբ, մայր և աղախին՝ մեծացուցանեմք։

Ո՛վ ամենասուրբ արարչընկալ տիրուհի և Աստուածածին. ո՛վ, որքան մեծ է 'ի քեզդ աւարտեալ խորհուրդ՝ սրբուհի։

Պատիւ քո մեծ է և անճառ, զոր ոչ պատմէ լեզու տկար։ Ապա զորպիսի՞ արժանաւոր գովութիւնս ոչ ընդունիցիս։ Եւ արդ որ բան բաղդատելով՝ զանհամեմատ քո մեծութիւնդ լիցի կարող գերահռչակել։

Արարչին մայր, անհասին ծնող, անբաւին գրկարան զգեցուցիչ, վերօրհնելոյն գրգիչ։

Անտանելւոյն կայարան, արեգականն օթարան. ահեղ բոցոյն բնակարան, աննիւթ բանին մարմնարան։

Изъ книгохранилища
Гос. Публ. Библиотеки
ДОНЪ-СОРА.
Изд. А. Мясницкая
и Пантелеевъ

թագաւորին գու խորան, երկնաւորին Ճեմարան. հոգւոյն սրբոյ օթեվան, վեհին պատկեր երկնանման:

Ամենօրհնեալ տիրուհի, երկնաւորաց թագուհի. մայր ու աղախին Քրիստոսի, Աստուածածին մայր լուսոյ:

Աստուածածին մայր աղատ, սուրբ տիրուհի անարատ. աղբիւր լուսոյ յորդառատ, Աստուածածին մայր լուսոյ:

Սուրբ մայրդ լուսոյ՝ բնակարան որդւոյ՝ բանին Աստուծոյ. ծնեալդ 'ի հողոյ՝ ծնող Աստուծոյ՝ որդւոյն միայնոյ:

Էին միակի՝ բանին անեղի՝ եղեր մայր յերկրի. ով երանուհի՝ պարծանք Եւայի՝ մայր տեառն Յիսուսի:

Աստուծոյն բնաւից՝ մայր և խոստակից՝ բնութեանս աղդակից. հողեղէն զարմից՝ պարծանք բոլորից՝ մարդկան երամից:

Ահա յաղագս այսոցիկ՝ ըստ անուան քո բանի՝ յիրաւի տացուք քեզ երանի, մայրդ Յիսուսի։

Ամենօրհնեալ աստուածամայր Մարիամ, քերովբէական աթոռ արարչին մերոյ տնօրէնութեան. զոր երանեն ամենայն ազինք հանապազ։

Լոյս լուսոյ մայր, և կենարար բանին բնակարան. քեզ երանիցեն ազգք և ազինք ամենայն։

Երանելիդ ամենեցուն՝ զԱստուած տանելով զբնութեամբ անտանելին, զամենեցունց ամենակալն արժանի եղեր կրել յորովայնի՝ որ երեւեցաւ ազգի մարդկան։

Անհաս տնօրէնութեան մայր, և բանին Աստուծոյ անձնաւոր տաճար. կառք անձնաւոր կայից՝ բազմելոյն յաթոռ քրովբէից։

Անեղաշէն տաճար հրաշալի, անպարագիծ էին բոլորից բնութեանց լայնածաւալ տեղի։

Յարկ դիտապետին՝ բանական հո-

տին, և արքայարան լուսակերտ անմահ Թագաւորին։

Խորան լուսոյ անվայրափակ արփւոյն կենաց, գերազանց քան ըզբնակուԹիւն անկոխելին սրբուԹեանց։

Խորհրդաւոր խորան բանին հօր բարձրելոյ, և մաքուր ծնօղ փեսային եկեղեցւոյ։

Սիրոյ անմահ փեսային մայր՝ դըշխոյ պանծալի, երկնաւոր արքայուհի՝ երանաւոր խոստմանն տեղի։

Առաքստ անՃառելւոյ բնակողին 'ի քեզ փեսայացեալ բանին, և մայր կաԹնամատոյց բնաւից ստեղծողին։

Իւղարան օծելուԹեան քրիստոսական անուանադրուԹեան, և վառարան բորբոքման անշէջ կայծական։

Ձքնաղագեղ լուսոյն ՃեմարանՃեմարան, անկէզ բոցոյն միշտ շտեմարան։ Լոյս եղական և տիպ աննման, մայր Աստուծոյ՝ սուրբ կոյս Մարիամ։

Աստուածամայր պարծանք կուսութեան, և օթեվան սուրբ Երրորդութեան:

Մեզ բարեխօս, մեղաց քաւարան, դուռն կենաց և արքայութեան, մայր գթութեան և ողորմութեան:

Մաղթանք առ Աստուածամայրն.

Սուրբ Աստուածածին, լեր բարեխօս վասն մեր:
Ծնօղ արարչին, լեր:
Սեղծողին մայր, լեր:
Աստուածորդւոյ մայր, լեր:
Լոյս՝ լուսոյ մայր, լեր:
Դուստր լուսոյ՝ Հօրն երկնաւորի, լեր:
Մայր լուսոյ՝ Որդւոյն միածնի, լեր:
Հարսն լուսոյ՝ Հոգւոյն Հշմարտի, լեր:
Աստուածամայր Մարիամ, լեր:
Տիրամայր Մարիամ, լեր:

Տիրուհի անարատ , լեր բարեխօս ։
Իսկուհի մաքուր , լեր ։
Թագուհի փառաց , լեր ։
Դշխոյ աշխարհի , լեր ։
Ամենասուրբ կոյս , լեր ։
Ամենօրհնեալ կոյս , լեր ։
Ամենապայծառ կոյս , լեր ։
Մարիամ հրաշագեղ , լեր ։
Մարիամ լուսապայծառ , լեր ։
Նոր երկինք , լեր ։
Աթոռ անեղին , լեր ։
Տաճար սրբափայլ , լեր ։
Լուսոյ ճեմարան , լեր ։
Խորան սիրական , լեր ։
Տաղաւար աստուածական , լեր ։
Եդեմ շնչական , լեր ։
Տունկ անմահութեան , լեր ։
Կտակ անջինջ , լեր ։
Արձան օրհնութեան , լեր ։
Գանձ անապական , լեր ։
Պսակ կուսութեան , լեր ։
Պարծանք ազգի մարդկան , լեր ։
Փառք որդւոց Սիոնի , լեր ։
Մաքրութեան շաւիղ , լեր ։

Դուռն երկնից, լեր բարեխօս։
Ճանապարհ արքայութեան, լեր։
Մայր երանութեան, լեր։
Մայր ողորմութեան, լեր։
Յոյս մեր և ապաւէն, լեր։

Աղաչիներ առ Տիրամայրն.

Աստուածածին դու ես յոյս և ապաւէն խոստովանողաց զքեզ, որդւոյ քո և Աստուծոյ բարեխօսեա կեցուցանել զմեզ։

Դու ծնողագութ մայր Մեսիային՝ տղայացելոյ Էմմանուէլին, յաւուր ծագման մեծ առաւօտին, կաց ընդ աջմէ երեւեցելոյն. խնդրեա զթողութիւն քոյին ծնողաց, և աստուածածին խոստովանողաց։

Անորիշ հպմամբ մերձաւոր անմատոյց լուսոյ, անձառ խոստմամբ ապառնեացն յուսոյ, 'ի մահու պարտեայն զերծո՛, զառ քեզ ապաստան՝ ծառայքս քումդ որդւոյ։

Արտասուօք օգնեա վոանդեցե-

լոյս գովեալդ 'ի կանայս. ծունր խոնարհեցո առ իմ հաշտութիւն, ծնօղդ Աստուծոյ։

Ընդ իմում թշուառիս հոգա, խորան բարձրելոյն։

Ձեռն տուր անկեալոյս, տաճար երկնային։

Փառաւորեա զորդիդ քո 'ի քեզ աստուածօրէն ինձ հրաշագործել քաւութիւն և ողորմութիւն, աղաչեսին Աստուծոյ և մայր։

Բարձրացի պատիւ քո ինեւ, և ցուցցի փրկութիւն իմ քեւ։

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

ՍՏՈՐՈԳԵԼԻՔ ԱՒՈՒՐՍ

Փառաւորեալ կոյս՝ Աստուածածնոյդ մայր, երկնաւորաց թագուհի՝ ցանկալի զուարթնոց.

ԱՌԱՒՕՏԻՆ

Քարոզ.

Զանարատն օրհնեացուք զԱստուածածին՝ որ կոյս մնաց յետ ծննդեան, և տարաւ յորովայնի զանտանելին ամենեցուն՝ զհամաբնակիցն հօր և ամենասուրբ հոգւոյն:

Զ Աստուածածինն և զմիշտ կոյսն անդադար օրհնեացուք. քանզի ծագեաց մեզ լոյս երեսաց՝ և փրկիչ անձանց մերոց:

Աղօթք.

Կուսածին մարդացեալ Աստուած իմ Յիսուս՝ յայնմ աւուր ահեղ ատենին զգինս արեան քո մի՛ դատապարտեր. այլ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի և միշտ կուսի տէր օգնեա ինձ միայն մարդասէր։

Քեզ միայնոյ մարմնացելոյդ 'ի սուրբ կուսէն՝ օրհնութիւն 'ի բարձունս վերերդեմք ասելով. փառք քեզ Քրիստոս, որ եկիր կամաւ հօր կեցուցանել զմեզ։

Արդ խնդրեմք 'ի քէն թագաւոր փառաց Քրիստոս, աղաչանօք սրբուհւոյ անարատ մօր քոյ և կուսի՝ ապրեցո զմեզ յաւիտենից 'ի մահուանէն։

Օրհնութիւն Կուսին.

Միայնոյ քեզ 'ի կանայս կոյս յետ ծննդեան՝ երգեմք զօրհնու-

թիւն. զի լոյս 'ի լուսոյ քեռ յայտնեցաւ աշխարհի, և զնախամօրն ելբարձ զանէծս անձաւռ ծննդեամբ 'ի քէն։

Միայն օրհնեալդ 'ի կանայս՝ մայր, և միշտ կոյս, և իմանալի լոյս, ծնօղ արարչին մերոյ. անդադար բարեբանեացուք։

Օրհնեալ դու 'ի կանայս՝ գլուխ նոցին պարծանաց և պայծառ պսակ. պսակ կուսութեան՝ մաքուր հարսնութեան. պսակ ընտրութեան՝ անվրդով դովութեան. պսակ անեղծութեան՝ լուսոյ նմանութեան. պսակ երանութեան՝ բանին հօր մայրութեան։

Ամենից խմբից մաքրագարդ կուսից՝ թագ և պսակ ազգաց համայնից. պայծառ երկին՝ ծաղիկ լուսային, ամենագովելոյ կոյս տիրածին։

Ընտրեալ շառաւիղ լուսոյ, հարսն փեսային արքոյ. պարծանք համայնից կուսից, մայր Մանուէլի սուրբ կոյս։

Անարատ տաճար՝ բնակարան անբաւ բանին Աստուծոյ, Մարիամ սուրբ կոյս, զքեզ և զծնեալն 'ի քէն մեծացուցանեմք։

Մեծացուցէ. (Տես յէջ 5.)

Աղերս առ ամենօրհնեալ Կոյսն.

Մաքուր և անբիծ կոյս յետ ծննդեան, որ մարմնով ծնար զարձակօղն 'ի կապից մահու. բարեխօս լեր վասն անձանց մերոց փրկել 'ի սպառնալեաց գեհենոյն։

Որ զԹագաւորն ամենեցուն յորովայնի քում կրեցեր, սրբուհի մայր և կոյս՝ և աղախին Քրիստոսի, բարեխօսեա առ տէր վասն մերոյ փրկուԹեան։

Բանին հօր մարմնարան՝ և առաջաստ բնակուԹեան, որ կաԹամբ կուսական՝ կերակրեցեր զէական բան. բարեխօսեա միածնին, Աստուածածին մայր բանին։

Գերագոյն արքութեամբ և կուսական մաքրութեամբ, բարձեր զանհասին բնութեամբ՝ 'ի գիրկս քո աննդեամբ. բարե՞ :

Քեզ օրհնութիւն տամ՝ ես քիւր՝ կոյս անարատ և մաքուր. անմահութեանց ես աղբիւր, ծարաւելոցըս տուր ջուր :

Վահան հաւատոյ՝ և նեցուկդ յուսոյ՝ արմատդ սիրոյ, ծովէդ երկնայնոյ՝ ցօղ կենաց արբո մեզ՝ և լիացո :

Ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութեան՝ յանձն իմ՝ անձրեւեալ՝ կենաց ինձ զօրէ, մայրդ բարձրելոյ՝ տեառն Յիսուսի՝ արարչին երկնի և բնաւին յերկրի :

Սուրբ զԱստուածածին. (Տես յէջ 7.)

Ընկալ տէր. Հայր մեր. Ողջոյն :

ԵՐԵԿՈՑԻՆ

Քարոզ.

Զտաճար անապական բանին հօր բարեբանեն դասք հոգեղինացն, գովեմք և մեք ձայնակցելով երկնայնոցն։

Մեծ է առնոսա հիացումն աքանչելի ահեղս գործոյ՝ քան զհասումն երկրաւորացս բանից պատմութեան։

Քանզի անճառութեամբ անհասականաւ վեհագոյն ամենեցուն փակեալ գտանի. և ոչ զօրեն երկնայինք՝ զարարչին անհաս տնօրէնութեանն զանքննելին ծնօղ՝ արժանապէս վերաքարոզել։

Այլ երգեսցէ բանս՝ որքան զօրեսցէ՝ 'ի բաղձանաց սրտի փափաքման՝ նմին ընծայ օրհնաւաք՝ փառաց տեսչութեան։

Աղօթք.

Արտասուաբեղուկ աղերսեմ. արձակեա զիս 'ի խաղաղութիւն՝ անարատ Ծնողի քո բարեխօսութեամբ. զոր զօրք երկնից 'ի բարձունս հանապազ մեծացուցանեն:

Յաւուր վրիժուց հատուցման ամբարշտաց՝ վերածիցես զմեզ ընդ հոգեղինաց դասն 'ի տեղի անկեալոց հրեշտակաց՝ բարեխօսութեամբ սրբոյ Աստուածածնին:

Օրհնութիւն Կոչական.

Զքեզ ոչ միայն որդիք մարդկան, այլ և վերին զօրութիւնք, դասք անմարմնոց հոգեղինաց հրեղինաց զուարթնոց և հրեշտակաց՝ գոհանեն և վերօրհնեն և փառաւորեն զմայր և զաղախին փրկչին մերոյ:

Զքեզ Աստուածածին՝ որ վերօրհնիս 'ի զօրաց հրեշտակաց, ազգ

մարդկան կենդանեաց մեծացուցանեմք։

Ուրախացիր Աստուածածին վերօրհնեալդ 'ի սրովբէից, ծագելով 'ի քէն մեզ լոյս՝ մայր եղեր վերաձգողին. ազգ և ազինք զքեզ մեծացուցանեմք։

Տեսին դասք իմանալի զօրութեանց զԱստուած մարմնով առ 'ի քէն ծնեալ. իսկ եկեղեցի որդւոյ քո, Աստուածածին, զքեզ խոստովանի, որ միայն կուսութեանց ես մայր։

Տէրութիւնք և զօրութիւնք, իշխանութիւնք և պետութիւնք, հրեշտակապետք և հրեշտակք՝ եղանակեն զերգս օրհնութեան. օրհնեալ ես կոյս տաճար մաքրեալ, յորում ստեղծօղն էից բազմեալ։

Ուրախ լեր հարսն երկնային՝ կոյս անարատական. քանզի երկնայնոցն զքեզ 'ի վեր ընկալեալ՝ ոճնեն միշտ ուրախութեամբ. ընդ որս և մեք երդեացուք քեզ օրհնութիւն մայր սեառն։

Որ 'ի վերջթեւեան սրոբէից և 'ի բաղմաշէաց քրոբէից փառաբանիս երգով Աստուածածին. ընդ որս և մեք համաձայնեալք բարեբանեմք զծագօղ իմանալի լուսոյն զմիշտ կոյսն:

Աստուածածին կոյս երանեալ յիմանալեացն վերօրհնեալ. ընդ հրեշտակն զքեզ գովեմք, զմայրդ Աստուծոյ վերապատուեմք. սրոբէական ձայնիւ զքեզ բարեբանեմք, և հոգեւոր երգով մեծացուցանեմք:

Յերկրածին սեռից գերազանցեալ երկնից՝ 'ի վերին զօրացն օրհնաբանեալ միշտ կոյս, հրեշտակային օրհնութեամբ պատուեալ զքեզ մեծացուցանեմք:

Եղեալ հարսն անմահին երկնաւոր արքային, առագաստ անձառին Մարիամ լուսածին: Բամք զօրացն վերին սիրով քո ըզմայլին, բաղձանօք կարօտին և յաւէտ փափաքին: Գերագոյն գահ կազմեալ տա-

Ճար սուրբ սիրացեալ. յոր Աստուածն բազմեալ, իսկուհի երանեալ։

Յորմէ զարհուրեալ դողային դասք վերին զուարթնոցն, տղայապէս առընկալեալ բարձեր 'ի գիրկս, և արբուցեր որպէս մայր ստացողին զքեզ զկուսական քո սուրբ զկաթն. զքեզ մեծացուցանեմք արժանապէս երգով Աստուածամայր և կոյս։

Դուռն երկնից՝ ծագումն մեծին, ամենօրհնեալ մայրդ միածնին. երկնաւորացն եղեր ցնծութիւն, բարձօղ անեղին սուրբ Աստուածածին։

Քեզ ո՛վ սիրածին սուրբ կոյս, երկրպագեսցուք մեզ յոյս. փառաւորեսցուք զՅիսուս, մայր Մանուէլի սուրբ կոյս։

Աղերս առ երկնից արքայուհին.

Աղաչեմ զքեզ սուրբ Աստուածածին, հրեշտակ 'ի մարդկանէ,

մարմնատեսիլ քերովբէ, երկնաւոր արքայուհի. ընդ անաղտ մաքրութեանդ՝ և անբիծ բարի. ընդ անարատ սրբութեանդ՝ և խնամակալ բարեխօս, բարեխօսեա խընդրեա, աղաչեա. զի ըստ անճառելի մաքրութեանդ և ահա զբանիդ հաւատամ զընդունելութիւն:

Աստուածածին անհարանացեալ՝ յերկրէ յերկինս հարան ընծայեալ, յորժամ բազմիս լուսոյ նման՝ քո միածնիդ յաջակողման, յայնժամ մաղթեա՛ ընդ մեր զնոյն՝ փրկել ըզմեզ յահեղ բոցոյն, համադասիլ ընդ արդարոցն՝ երդել քեզ փառս ընդ երկնայնոցն:

Դասք անմարմնոց հրեշտակաց քեզ երանեն ամենօրհնեալ կոյս Մարիամ, որ զէակից բանն՝ որ ընդ հօր՝ կրեցեր 'ի քեզ անսերմնապէս. առ նա միշտ բարեխօսեա՛ վասն քաւութեան մեղաց մերոց:

Մայր սուրբ աքանչելի. (Տես յէջ 14.)

Ներբող ամենասուրբ Կոյսին երկնաշունչ բազմահոյն.

Ներբողական ձայնիւ՝ եղանակեմք քեզ զերգս օրհնութեան ամենօրհնեալդ 'ի կանայս, սկզբնաբար կուսից անարատութեան. 'ի բերկրեալ լեզուս շրթանց զուարթնոց միշտ բարեբանեալ սուրբ Աստուածածին:

Ամենագովելի և քան զերկինս բարձրագոյն, լոյս գերազանց՝ մաքուր սերովբէ, Աստուածածին՝ մարմնաւոր քրովբէ. վարուք մաքրեալ, բարութեամբ լցեալ, հեզութեամբ արձանացեալ, առաքինութեամբ կատարեալ, քաղցրութեամբ աղբիւրացեալ՝ սուրբ աստուածամայր:

Իսկուհի երկնային կենդանեաց դաւառին. լուսանկար ծնօղ անմահին՝ լուսաւորիչ աղգիս մարդկային.

վերին զօրաց հոյլք ամենեքին՝ սպա-
սաւորեն քեզ Աստուածածին։

Ի մարդկային զարմէ հրեշտակ
երկնային, 'ի յերգծականաց սեռից
անմահ սերովբէ. մաքրութիւն կու-
սից և սկզբնաշաւիղ դասուց եր-
ջանկաց. անարատ կուսից նպատակ
կրօնից՝ տիրամայր սուրբ Աստուա-
ծածին։

Ստակալն սրովբէ վեհ քան զքե-
րովբէ, քեզ փառք 'ի յերկրէ տի-
րամայր, վսեմական վարուց նախըն-
թաց և յառաջաշաւիղ սուրբ Ա-
ստուածածին։

Երկինք երկնից վեհագոյն՝ քե-
րովբէից գերագոյն, արքարան մա-
քրութեան և ընդունակ զգաստու-
թեան. նպատակ կուսութեան և
օրինակ երանութեան. մաքուր կու-
սութեամբ էին խնկարան՝ տիրուհի
օրհնեալ սուրբ Աստուածածին։

Նշոյլ փրկական շնորհօք անճա-
ռին, հողեղէն սրովբէ գոլով 'ի
մարմին. մայր կուսութեամբ՝ բար-

ձօղ արարչին, ամենօրհնեալ սուրբ Աստուածածին։

Անթառամ ծաղիկ կուսութեան, վարդ բոցակէզ և ճիւղ օրհնութեան. ծաղկեալ սրբուհի մայր երանութեան, երրորդութեանըն բնակարան. վերօրհնեալդ 'ի հրեշտակաց յաստուածութեանն փառաբանչաց՝ սուրբդ տիրամայր։

Մաքրութեան շաւիղ նախընթաց կուսից, մաքուր և անբիծ կոյսդ շնորհալից. հարան լուսոյ ոսկեզարդ զգեստուք պաճուճեալ, կաթնաձիր մայր թեւաւքօղելոյն 'ի սրբէից։

Մայր կուսութեան և յղութեան լուսոյ, կոյս գովեալ գերապանծ դշխոյ, քրովբէօրէն հրաբերան ըղխող նշուլից, անկցորդ 'ի մանէ հողածնելոցս հասարակաց՝ ջինջ անարատ 'ի տիպ հայելւոյ։

Ձքնաղ օրիորդ սուրբ կոյս տալիթայ, շնորհալոյս մարգարիտ ոսկի սոփերայ. պսակ կուսից թագ և

պարծանք աշխարհի, երկնաւորաց թագուհի։

Մաքուր աղաւնի և հարսն երկնից Մարիամ, հրաշափառագոյն կոյս մաքրափայլ շուշան. ցանկալի զը-ւարթնոց՝ նիւթեղէն սրովբէ՝ դեղ մարդարտափայլ։

Ընհարսն'ի յերկրի հարսնացեալ երկնի՝ անփորձ'ի մարմնի. ամբիծ աղաւնի, մաքուր ըստ տատրակի՝ մայր դու ըղձալի, փառաւորեալ ընդ միածնին հրճուողական ձայնիւ երգոց։

Սիրամարգ բարի վարագ մարդարտալի, տատրակ տենչալի Մարիամ, հարսն և թագուհի. 'ի հրեշտակաց սպասաւորեալ, և բարեբանեալ անդադար միշտ 'ի վերին զօրաց։

Դու քերովբէ եղեր հողածին, և մայր մաքուր մեծի ազգային. արդար անբիծ հարսն երկնաւորին, և ճեմարան լուսոյ փառակցին. սպասաւորեալդ 'ի սերովբէից, և երկրը-պագեալդ յանմարմնական զօրաց։

Ինն եակ գասուն եղեր վեհագոյն, կոյս թագուհի մայր անտանելւոյն. հարսն արքուհի հօրն Քրիստոսի, տաճար արքութեան՝ հոգւոյն Աստուծոյ. 'ի զորաց հոգեղինաց երգաբանեալ արքուհի:

Դու պարծանք կուսութեան մարդկան, դու ուրախութիւն հրեշտակաց. դու ցնծութիւն երկնի և երկրի. բարեբանեալ յազգին և յազգս ամենայն:

Զուարթնոց երկնից ցնծութիւն հոգեղինաց խնդութիւն, հողելինաց փրկութիւն, Աստուածածին մայր լուսոյ:

Վեհագոյն սերովբէից և բազմաչեայ քերովբէից տիրամայր Աստուածածին, մեզ բարեխօս՝ մեղաց քաւարան, դուռն կենաց և արքայութեան, մայր գթութեան և ողորմութեան:

Մաղթանք առ Կոյսն ամենաօրհնեալ.

Սուրբ կոյս Մարիամ, բարեխօսեա վասն մեր։
Կոյս անարատ, բարե։
Կոյս անապական, բարե։
Կոյս գովեալ, բարե։
Մաքուր և անբիծ կոյս, բարե։
Երջանիկ կոյս, բարե։
Ցանկալի կուսից, բարե։
Պատկ կուսից, բարե։
Պարծանք կուսութեան մարդկան, բարե։
Անխախտելի կուսութիւն, բարե։
Մայր կուսութեան, բարե։
Մայր և կոյս, բարե։
Մայր սրբութեան, բարե։
Միայն սրբուհի, բարե։
Անհամեմատ 'ի կանայս, բարե։
Մաքուր աղաւնի, բարե։
Տաճարակ աստուծոյ, բարե։

Մարգարիտ լուսափայլ, բարե։
Շնորհալոյս մարգարիտ, բարե։
Ծաղկեալ վարդենի, բարե։
Հովիտ պայծառ շուշանի, բարե։
Ծաղիկ լուսոյ անթառամ, բարե։
Ծաղիկ անուշահոտ, բարե։
Տուփ անոյշ խնկոց, բարե։
Բուրվառ խնկոց անուշից, բարե։
Տաճար սրբութեան, բարե։
Հարսն անփորձ, բարե։
Հարսն պանծալի, բարե։
Հարսն արփիազգեաց, բարե։
Երկնից թագուհի, բարե։
Երկնաւորաց տիրուհի, բարե։
Հրեշտակ 'ի մարդկանէ, բարե։
Մարմնատեսիլ քերովբէ, բարե։
Սերովբէ հողեղէն, բարե։
Գերագոյն քերովբէից, բարե։
Վերօրհնեալ 'ի հրեշտակաց, բարե։
Սպասաւորեալ 'ի սերով-
բէից, բարե։
Երկրպագեալ յանմարմնոց, բարե։
Ցանկալի զուարթնոց, բարե։
Հոգեղինաց խնդութիւն, բարե։

Հողեղենաց փրկութիւն, բարե։
Ուրախութիւն հրեշտակաց, բարե։
Ուրախութիւն արամեցելոյ
բնութեանս, բարե։
Ապաւէն մեր և յոյս, բարե։

Աղաչիւորիւն
առ Կոյսն բարեգոռ.

Յոյս մեր և ապաւէն՝ մայր տեառն և կոյս սուրբ, որ հուր աստուա-ծութեանն ոչ քոցակիզեաց զքո սուրբ զորովայն. բարեխօսեա առ տէր վասն մերոյ փրկութեան։

Գանձ անապական սուրբ կոյս, արովքէ հողեղէն և լոյս կենաց ա-պաւէն և յոյս, մայր Մանուէլի սուրբ կոյս։

Ի՜ւծեալ պաղատիմք առ քեզ, դու լեր բարեխօս ընդ մեզ, զի մեք վերասցուք առ քեզ, մայր Մա-նուէլի սուրբ կոյս։

Գովեմ զքեզ Մարիամ, պաղա-

տանջք առ քեզ գամ. առ ոտս անկեալ քո և լամ, Աստուածածին մայր լուսոյ։

Գիտ զիս տիրամայր, ողորմեա ինձ սրբուհի. շահեա զկորուսեալս անարատ, յանձանձեա զհարթուցեալս երկանիկ. զամաչեցեալս յառաջ մատոյ բարեշնորհ, զմերժեալս ընտանեցո մեծարեալդ յԱստուծոյ. վրիպելոյս ինձ հնարաւորեա գտվեալ. յուսահատելոյս ինձ միջնորդեա սուրբ կոյս։

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

ՍՏՈՐՈԳԵԼԻՔ ԱՒՈՒՐՍ

Մարիաւ հիրաշագեղ՝ դուստր իմաստուն մօրն Եւայի, դուստր Դաւթի թագաւորի, մարգարէից հանդիսաւորեալ.

ԱՌԱՒՕՏԻՆ

Քարոզ.

Ուրախ լեր Եւա նախնի մայ-ցուութեամբ, 'ի քէն ծնաւ ծաղիկն սրհնութեան. յոյս քաւութեան և ողորմութեան, զաւակ Հշմարիտ Գէր ազատութեան. դրախտ աստուածատունկ ծառ անմահութեան, բողբոջ վայելուչ այդին

ցնծութեան. ջուր կենդանի ծարաւեալ բնութեանս, միջնորդ հաշտութեան և խաղաղութեան։

Ծննդեամբ սուրբ կուսին դրախտին Ադամայ բացաւ, և ծառն կենաց պարգեւ բնութեանս տուաւ։ Կոյսն Մարիամ Աստուածածին եղեալ, 'ի պարտուց նախնեաց բնութիւնս ազատեալ։ Գոչէ նոր Սիոն նոր երգս օրհնութեան, շնորհ ունելով կուսին՝ յորում ամենայն ազգք օրհնեցան։

Քանզի լցաւ խոստումն Աստուծոյ առ նահապետսն՝ 'ի զաւակէ նոցին օրհնիլ ամենայն ազգանց. զի յարմատոյ նոցին բղխեաց կոյսն սուրբ, որ ծնաւ զբանն բարձօղ մեղաց նախահօրն. վասն տացուք տուողին մեզ զօրհնեալն 'ի կանայս։

Աղօթք.

Որ առաքեցար 'ի հայրական ծոցոյ՝ ծածկեալ խորհուրդ ընդ հոր

յաւիտեան, և առէր մարմին զմեզ ողջացելոյ նախաստեղծին յանապական կան կուսէն՝ անՃառ միութեամբ՝ վասն մերոյ փրկութեան, ողորմեա։

Օրհնութիւն 'ի բարձունս անօրինեցելոյն 'ի կուսէն՝ թագաւորին մերոյ՝ ալէլուիա ալէլուիա։ Օրհնութիւն 'ի բարձունս անսասանելի և հաստատուն յուսոյն մերոյ, ալէ՛՛, ալէ՛՛։ Օրհնութիւն 'ի բարձունս անբաժանելի և միասնական սուրբ երրորդութեանն. ալէլուիա, ալէլուիա։

Օրհնութիւն Կուսին.

Ո՛վ գերահրաշ ծաղիկ՝ բուրեալ յեղեմայ հոտ անմահութեան՝ ծընընդոցս Եւայի, յորմէ սփռեցաւ մահ ընդ ամենեսիս, օրհնութեամբ ողջեզ մեծացուցանեմք։

Դու լուծիչ երկանց՝ բարձող ա-նիծից, ծագումն արեւու լուսոյն Ճշմարտի՝ որով հերքեաւ խաւարն

առաջին, օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք։

Քեզ լուծաւ կնիք դատապարտութեան, և քեզ կանգնեցաւ մեղուցեալ մայրն գլորեալ. վասն որոյ զքեզ Աստուածածին և կոյս անդադար երգով մեծացուցանեմք։

Ո՞վ կոյս Մարիամ մայր հայրածին անեղ բանին, ո՞վ կուսից պարծանք դուստր իմաստուն մօրն Եւայի. քեզ երանեն ամենայն ազգք։

Մայր Աստուծոյ Մարիամ, դուստրը Դաւթի թագաւորի. ծնար մարմնով զնորն Ադամ, որ նորոգեաց զհինն Ադամ. քեզ երանիցեն ազգ և ազգք ամենայն։

Խնդա՛ տաճար մայր տեառն Յիսուսի, և առագաստ Աստուծոյ բանի. հարսն երկնային մանուկ աղաւնի, արդար անբիծ օրհնեալ տիրուհի. դուստր անարատ մօր քո Եւայի։

Ճիւղ ծառոյն կենացն եղեր, մեզ բերելով զանմահ պտուղն,

մայր կենդանեացն հոգւոց՝ զոր նա-
խամայրն ծանոյց։

Թագ արքայական կազմեալ, նախնոյն Ադամայ շնորհեալ. դու փառք Եւայի բերկրեալ, մայր Մանուէլի սուրբ կոյս։

Մեղուցելոյ կնոջն առաջնոյ՝ առանց յանցանաց զաւակ գովեցար. և ամենայն անբծաց ընտրութեան պսակ սրբութեան դու դաւանեցար։

Միջնորդ կենաց երկոցունց՝ ընքանչելապէս համարձակեցար, և համոզիչ 'ի խաղաղութիւն մերկածուփ շարժմանց կացուցար։

Զքեզ դուռն երկնից և Ճանապարհ արքայութեան, բարձոյ աստիճից և սրովբէ հողեղէն, մեծացուցանեմք։

Մեծացուսցէ. (Տես յէջ 5.)

Աղերս
առ աստուածածին Մարիամ.

Կուսին նախնոյ մօրն Եւայի՝ յորմէ Ադամն հին պարտի, բարձան անէծքն տրտմական՝ քո սուրբ ծննդեամբ կոյս Մարիամ. աղաչեա՛ զքո միածինն՝ թողուլ ըզմեզս որդւոց նոցին. յոր օրհնեցաք ազգս երկրածին, տամք զօրհնութիւն ստոյգ կուսին։

Որ անապական ծննդեամբդ քո լուծեր զերկունս նախամօրն՝ Մարիամ մայր Աստուծոյ, բարեխօսեա՛ առ միածին որդին՝ լուծանել զկապանս մեղաց մերոց, և աղաչեա՛ փրկել զանձինս մեր 'ի փորձութենէ։

Դու ծաղիկ անթառամ տոհմի սեռիս մարդկութեան, և շառաւիղ օրհնութեան նախնոյ ծնողին մեր բնութեան. բարեխօսեա՛ միածնին՝ Աստուածածին մայր բանին։

կատակ անջինջ, արձան օրհնութեան՝ հօր Աստուծոյ առ իւր աբարածս. ահա հայցեմք 'ի քէն մայր կենաց, զմերս ընծայեա՛ աղերս մաղթանաց, աղաչեմք։

Սուրբ զԱստուածածինն. (Տես յէջ 7.)

Ընկալ տէր։ Հայր մեր։ Ողջոյն։

ԵՐԵԿՈՅԻՆ

Քարոզ.

Զուարճացիր Սիոնըդ հին հանգիստարան տեառնողաց, որ բազմադոյն օրինակօք գուշակեցեր զծնող բանին տեառն Աստուծոյ. բարձր արարէք զնա յաւիտեան։

Աղօթք.

Որ զնախագրեալն առ 'ի քէն մարգարէիւք՝ եկիր կատարել, անմայր 'ի հօրէ անակղբնաբար՝ լինել

անհայր 'ի սրբոյ կուսէն. զոր առ քեզ ունիմք բարեխօս վասն անձանց մերոց։

Որ եկիր 'ի կատարումն կանխասացս մարգարէից, յանձն առեր մարմնանալ 'ի սրբոյ կուսէն մարդ Ճշմարտապէս, աղաչանօք մեր քո ողորմեա՛ մեզ որդի Աստուծոյ։

Օրհնութիւն Կուսին.

Զքեզ կատարումն մարգարէից՝ կուսական քո ծննդեամբ, որով բնութեան քակտեցան օրէնք, հրաբուն սեռիցն փոխադրեալ 'ի լուսաձեմ խորանն, անդադար ձայնիւ՝ զքեզ բարեբանեմք, և հոգեւոր երգով մեծացուցանեմք։

Զքեզ մորենի անկէզ լեառն վիմածին, դուռն փակեալ և աղբիւր կնքեալ, նախատեսացն գուշակեալ, մայր և կոյս, հոգեւոր երգով ըզքեզ բարեբանեմք և փառաւորեմք զմիածին քո զորդին։

Զքեզ մայր Իմմանուէլի մարգարէին յառաջ դուշակեալ, աղջ մարդկան կենդանեաց մեծացուցանեմք։

Նահապետացն Աբրահամու՝ Իսահակայ և Յակոբայ պարգեւեցար 'ի յԱստուծոյ կոյս Մարիամ դուստրը նոցին. երանեն ազգ և ազինք այսօր զծնեալդ 'ի յԱննայէ։

Մարգարիտ լուսափայլ հոգւոյն սրբոյ տուն և տաճար, մարգարէից բանք նախաձառ այսօր լցան 'ի քեզ դումար. Մովսէս դաստուքն իւրովք խաչառ՝ 'ի պատիւ քո անդ սրբանայր։

Մարգարէից հանդիսարան և դրաւական կենաց մարդկան Մարիամ աստուածամայր, ընդունարան եօթնարփեան շնորհաց, խաչիսխ յուսոյ հաստատութեան, զուդաթիւ աւուրց դարուցս անցաւորաց. օրհնութեամբ երդով եկեղեցիք տիեզերաց այսօր ասեն զյիշատակ ծննդեան քո 'ի մօրէ։

Աղերս առ կոյսն Մարիամ.

Աստուածածին միւն լուսոյ ամպ հովանաւոր, և բնակարան բանին՝ որ բանիւ հովուէր զԽարայէլ, բարեխօսեա՛ նմա վասն անձանց մերոց։

Որ զՀուրն Աստուած 'ի քեզ կրեցեր մորենի անկիզելի, դառնաձաշակ պտղոյն քաղցրացուցիչ անձաւռելի քոյին ծննդեամբ. 'ի քէն հայցեմք՝ մաղթեա՛ փրկել զմեզ 'ի հրոյն յաւիտենից։

Մայր Քրիստոսի և բնակարան բանին Աստուծոյ, անհատուցեան խորհրդոյն ապաստաւորեցեր, միշնորդ եղեր Աստուծոյ և մարդկանառ. նա միշտ բարեխօսեա՛ վասն անձանց մերոց։

Միամայր Մարիամ ծնունդ Աննայի, զաւակ Յովակիմայ դուստր Դաւթի արքայի, հիմն նորոյ աշխարհի՝ ընտրեալ յառաջ քան զշիմունս 'ի սկզբանէ աշխարհի.

դշխոյ աշխարհի փառք և պատիւ՝ որդւոց սիոնի. սրբեալ զմեզ 'ի մեղաց լեր բարեխօս անմոռաց։

Մայր սուրբ. (Տես յէջ 14.)

Ներբող
ամենօրհնեալ Մարիամոյ.

Աստուածածին բուրաստան, պարտէզ ծաղկեալ և շուշան. բողբոջ և տունկ պալատան, դուստրը Եւայի անեման։

Դրախտ Աստուծոյ ծաղկալի, նարդոս բուրեալ 'ի յոգի. հոլիտ պայծառ շուշանի, աղբիւր գեղոց քառակի։

Փափկութեան դրախտին բացօղ բանալի, կանգնումն Ադամայ և կեանք Եւայի. միջնորդ հաշտութեան մօր մեղուցելոյն, գաւազան յուսոյ հօր գլորելոյն։

Սուրբ կոյս Մարիամ՝ մօրն Եւայի բժիշկ, նախնոյն Ադամայ՝

աղատարար ծնունդ. ցուպ Ադամայ, հանդերձ Եւայի։

Միայնդ արժանի 'ի ծնունդս Եւայի՝ ծնօղ Յիսուսի, խոսաովանեալ մայրդ կենդանեաց՝ ողջացուցիչ երկանցն Եւայի։

Ծառ դու կենսաբիւթ պտղոյն, տնկեալ 'ի բնութիւն մարդոյն. կեանք մահացելոյ նախնոյն, մայր Մանուէլի սուրբ կոյս։

Հուրն Աստուած 'ի քեզ վառեալ, յարգանդ քո մաքուր բուրվառ, հոտ անմահութեան բուրեալ, մայր Մանուէլի սուրբ կոյս։

Ղամբար համապիւռ լուսոյ, վառեալ 'ի հոգւոյն սրբոյ, հերքիչ մահաբեր մթոյ, մայր Մանուէլի սուրբ կոյս։

Ո՞վ բոլոր լուսին՝ մայր և ծնօղ արուսեկին. ո՞վ քաղցր առաւօտ, լուսածագեալ մեզ անապօտ։

Արեւուն ծագման՝ ակն արփիափայլ, մերկացելոյ այգոյն՝ ասող առաւօտի։ Գիշերային մթոյն՝ խոս-

նակ բերկրանաց. օրինի ստուերին տառ ՃշմարտաՃառ։

Նախասահեղծ հօրն մերկացելոյ՝ փառք անկողոպտելի. վշտացելոյ ա-նիծապարտ մօրն՝ սփոփիչ քաւութեան. որդւոց նոցին խռովութեան՝ խաղաղութեան Ճայնատու։

Նոյեան տապան կենարար, աբ-րահամեան տաղաւար. կտակա-գրին տապանակ, անՃառ լուսոյն աշտանակ։

Ժառանգ աւետեաց ուխտին՝ հօրն Աբրահամու զարմին. թագ-պարծանաց մեծի արքային, աս-տուածահօրն Դաւթին։

Ծաղիկ պայծառ ծովային, և մարգարիտ մեծագին։ Ի ծովային բերմանց շնորհալոյս մարգարիտ։ Ի յեսսեանն բուսոյ քաղցրապտուղ ծաղիկ. 'Ի հաւուց նախնեացն Ճիւռ օրհնութեան։ Մեզ բարեխօս՝ մե-ղաց քաւարան, դուռն կենաց և արքայութեան, մայր գթութեան և ողորմութեան։

Մաղթանք առ Մարիամ, մաղ-գարէից հանդիսաբան.

Մարիամ սրբուհի, լեր մեզ հովանի։
Մայր Քրիստոսի, լեր։
Ծնող և սղախին տեառն, լեր։
Միայնդ 'ի կանայս օրհնեալ, լեր։
Դուստր լուսոյ, լեր։
Անդատապարտ շառաւիղ, լեր։
Շառաւիղ օրհնութեան նա-խահօրն, լեր։
Մօրն Եւայի բժիշկ, լեր։
Բարձող տրտմութեան, լեր։
Ազատիչ յանցանաց, լեր։
Անիծից լուծիչ, լեր։
Մեղաց քաւիչ, լեր։
Դառնութեան անուշիչ, լեր։
Դրախտ աստուածային, լեր։
Աստուածատունկ եդեմ, լեր։
Նորատունկ բուրաստան, լեր։
Պարտէզ փակեալ, լեր։

Աղբիւր կենաց, լեր։
Դառ կենաց, լեր։
Արմատ անկոյն անմահութեան, լեր։
Բարուենակ ծաղկեալ, լեր։
Անթառամ ծաղիկ, լեր։
Շուշան հովտաց, լեր։
Վարդ բուրաստանի, լեր։
Անգաստան մաքուր 'ի փշոց մեղաց, լեր։
Այգի վայելուչ, լեր։
Մորենի անկիզելի, լեր։
Շլաքեր աղաւնի նոյեան տապանի, լեր։
Տապանակ ապրեցուցիչ, լեր։
Սափոր ոսկեղէն լի մանանայիւ, լեր։
Գաւազան ծաղկեալ, լեր։
Սիւն լուսոյ, լեր։
Երկնաբերձ աշտանակ, լեր։
Երկնային դուռն, լեր։
Գեղմն խմանալի, լեր։
Ցող քաղցրածաւալ, լեր։
Առաւօտ խաղաղութեան, լեր։
Արուսեակ զուարթարար, լեր։

Լուսին լուսալի, լեր։
Ճառագայթ լուսոյ, լեր։
Ծագողդ արեւու, լեր։
Միջնորդ Աստուծոյ և մարդ-
կան, լեր։
Գրաւական կենաց մարդկան, լեր։
Կտակ նուիրեալ, լեր։
Ապաւէն կենաց։ լեր։

Ապաշխարութիւն առ տիրամայրն Մարիամ.

Ապաւինիմք 'ի քո բարեխօսու-թիւնդ Աստուածածին Մարիամ, մայր տեառն և կոյս սուրբ, հարսն երկնից և դուռն կնքեալ, զոր մար-դարէն ետես։

Բամկական երամ որդւոյ քո տոհմից, քեզ երկրպագեն գովեալդ 'ի բնաւից. երանուհիդ ազգամեան զարմից՝ յոյս ապաստանի յերկրի և երկնից. դրախտին բացող կենացն մտից, կապտող սուսերին որ 'ի

սրովբէից. սուրբ Մարիամ պատկդ կուսից՝ անձանց հաշտարար հոգեւոցս ամենից։

Ընդ մեզ հաշտեա սրբուհի, գթա 'ի մեզ տիրուհի, փրկեա զմեզ թագուհի, Աստուածածին մայր լուսոյ։

Ցոյց յիս զգթածութիւնդ՝ լուծիչդ անիծից. զդառնութիւնս իմ անուշեա քաղցրութիւն. զբաժանմանն իմ խորոց քակտեա հաշտութիւն. զանմաքրութիւնս իմ բարձ՝ եղծման ընդոտնիչ. վասն իմ մուտ 'ի հանդէս՝ մահու նահանջիչ. զծըփեալս հաստատեա՝ հանդիստ. փոխեա զիս 'ի խռովութեանցս յուզմանց ո՛վ խաղաղարար։

ՀՈՐԵՔԾԱԲԱԹԻ

ՍՏՈՐՈԳԵԼԻՔ ԱՒՈՒՐՍ

Ամենապայծառ բերկրեալ կոյս, 'ի յորդոյն շանչք առուրք քո շնորհօք առլցեալ.

ԱՌԱՒՕՏԻՆ

Քարոզ.

Ծածկեալ խորհուրդն ծանուցաւ՝ յորմէ դարուն խաւարեալ, 'ի յորմէ օր դարձեալ հրեշտակին՝ եւ զաւետիսն կուսական, թէ լոյսն որ ոչ բովանդակի, 'ի քէն մարմնով պարուհնակի. յոր օրհնեցայք աղգ երկրածին, առաք օրհնութիւն պարզոյ կուսին:

Խորհուրդն անճառ ծածկեալն

յազգաց և յաւիտեանց՝ յայտնեցաւ ինչմամբ հրեշտակապետին այսօր առ կոյսն Մարիամ, զոր առ տէր ունիմք բարեխօս վասն անձանց մերոց։

Առաքի հրեշտակապետն առ սերովբէն հողեղէն, ասէ, տէրն և արարօղն առաքեալ 'ի հօրէ՝ մարմնանայ 'ի քէն փրկօղն։

Եկայք փրկեալք կենարար ինչմամբ բանին հօր 'ի յարգանդ կուսին, ընդ երկնայնոց դասուցն երգով զտէր օրհնեցէք, բարձր արարէք զնա յաւիտեան։

Աղօթք.

Որ առաքեցեր զմիածինդ 'ի փրկութիւն տիեզերաց՝ անեղ էութեամբ եղանիլ մարմին 'ի սուրբ կուսէն՝ հայր երկնաւոր, զոր առքեզ ունիմք բարեխօս վասն անձանց մերոց։

Որ կերպարան հօր և արարչակից բանդ՝ վասն փրկութեան աղգի

մարդկան այսօր 'ի կուսէ զկերպա-
րանս ծառայի զդեցար մարդասի-
րասէս , քո ամենակեցոյց գալըս-
տեամբդ ողորմեա մեզ Աստուած :

Որ 'ի ստուերս Ճշմարտութեան
խաւեալ յօրէնս տեսանողք , այսօր
'ի գլուխս գրելոց նոցին հովանա-
ցեալ սրբոյ կուսին 'ի բնակութեան
քում էակցին . աղաչանք սորա
ողորմեա մեզ Աստուած :

Օրհնութիւն Կուսին .

Ուրախացիր սրբուհի Գաբրիէլի
աւետեաքն , որ քարոզեացն զգա-
լուստ արքային տեառն 'ի յերկնից :

Ողջոյն ընդ քեզ Մարիամ՝ բնա-
կարան արժանաւոր բանին խոնարհ-
հութեան , որ ոչ ընդ քեզ միայն ,
այլ և 'ի քեզ :

Խրախացիր յողջոյն նախընծայ
երկնաւոր աւետաւորին՝ տաճար
սրբափայլ . առ որ հաճեալ հաւա-
նութեամբ երրորդական փառք աս-

տուածութեանն՝ Ճանապարհ արար հանդստեան. քանզի հոգին սուրբ եկն 'ի քեզ՝ յօրինօղն անախտ սրբութեան, և բարձրելոյն հօրն զօրութիւն մօրդ հովանացաւ, որդւոյն պատրաստեալ զքեզ ընդունակ։

Խրախացիր յաւէտ հրճուանօք բերկրեալդ 'ի կանայս, բնակարան հաճութեան կամաց անեղն աստուածութեան, 'ի բարձրեալն հօրէ զօրացեալ և հովանացեալ, հանգրստեամբ հոգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ, բնակութեամբ որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ։

Խրախացիր անբաւ բերկրանօք հարան լուսոյ՝ հրաւիրեալ 'ի ծնողութիւն հօրն միածնի. որ երկրաւոր մարմնով՝ երկնայնոյն աթոռ կազմեցար, և երրորդութեանն անտես թաքնութեան խորհրդակից սիրոյ կոչեցար։

Աւետիս քեզ տիրամայր՝ սրովբէական սրովբէական թրովբէական թոռ, հուսալ երանութեան՝ Ճանապարհ արար հանդստեան. քանզի հոգին սուրբ եկն 'ի քեզ՝ յօրինօղն անախտ սրբութեան, և բարձրելոյն հօրն զօրութիւն մօրդ հովանացաւ, որդւոյն պատրաստեալ զքեզ ընդունակ։

Խրախացիր յաւէտ հրճուանօք բերկրեալդ 'ի կանայս, բնակարան հաճութեան կամաց անեղն աստուածութեան, 'ի բարձրեալն հօրէ զօրացեալ և հովանացեալ, հանգրստեամբ հոգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ, բնակութեամբ որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ։

Խրախացիր անբաւ բերկրանօք հարան լուսոյ՝ հրաւիրեալ 'ի ծնողութիւն հօրն միածնի. որ երկրաւոր մարմնով՝ երկնայնոյն աթոռ կազմեցար, և երրորդութեանն անտես թաքնութեան խորհրդակից սիրոյ կոչեցար։

Աւետիս քեզ տիրամայր՝ սրովբէական սրովբէական թրովբէական թոռ, հուսալ եր-

բակին լոյս գերազանց, լուսոյն արփի վեհինաձեմ։

Խնդա խորանդ Աստուծոյ՝ մայր լուսոյ մարգարէութեան, բարձող բարձողին և տաճար բանին՝ անպարագիծ մեծի հզօրին. և տէր ընդքեզ յաւիտեան։

Երկրպագեմք սրբուհւոյդ բերկրեալ, անձառ լուսոփն լուսաւորեալ. որ արժանապէս պատուեալ պանծացար, և մեծարեցար դշխոյ բարձրելոյն։

Երկինք երկնից յայտնեցար, տաճար լուսոյ կազմեցար. յաթոռ փառաց բազմեցար, Աստուածածին մայր լուսոյ։

Ուրախ լեր աղբիւր կենաց. ջրոյն կենդանութեան, զոր ծարաւելոյ ընութեանս եռուր 'ի յարբու�. ղքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք։

Մեծացուցէ. (Տես յէջ 5.)

Աղերս առ կոյսն բերկրեալ .

Ուրախութիւն տրամեցելոյ բնութեանս՝ բերկրեալ կոյս Մարիամ. զոր ողջունաբեր աւետեաք կրեցեր զառուօղն 'ի քեզ զօրէնս ողջունի, առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց :

Որ զհուրն Աստուած յորովայնի քում ընկալար, և ծնար անձառապէս զկենագործօղն ամենեցուն, բարեխօս զքեզ ունիմք՝ որ երանեալդ ես 'ի կանայս :

Որ յամենայն ազգաց երանեցար սրբուհի և կոյս Մարիամ, աղաչեա զառ 'ի քէն զմարմնացեալն Աստուած՝ ապրեցուցանել զմեզ 'ի սպառնալեաց գեհենոյն :

Հարան ընծայեալ յերկրէ յերկինս յոր համբառնամք առ քեզ զհոգիս, յօր լսելոյ քո զաւետիս խնդրեա լինել մեզ լսելիս, զձայն աւետեաց քո միածնին եթէ եկայք

օրհնեալք հօր իմ. յոր օրհնեցայք աղգ երկրածին՝ օրհնեմք զօրհնեալդ պատուղ կուսին :

Սուրբ զԱստուած". (Տես յէջ 7.)
Ընկալ տէր : Հայր մեր : Ողջոյն :

ԵՐԵԿՈՅԻՆ

Քարոզ .

Զոր ընտրեաց Աստուած յամենայն ազգաց երկրի՝ ծնանիլ 'ի նմանէ , ապրեցուցանել զմեզ կուռոցն 'ի պաշտելութենէ , որպէս զԱստուածածին միշտ փառաւորեացուք :

Բարձր արարէք զծնօղ անտանելի բանին զմիշտ կոյսն :

Բարձր արարէք զծագօղ իմանալի լուսոյն զմիշտ կոյսն :

Բարձր արարէք զմայր մաքուր բանին զմիշտ կոյսն :

Աղօթք.

Որ խոնարհեցար յերկնից անմեկնելիդ 'ի հօրէ որդի Աստուծոյ և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն, հայցմամբ ծագողին լուսոյդ և մեզ ողորմեա :

Զքեզ աղաչեմք անսկզբնակից հօր որդի, որ այսօր նախաստեղծին բնութեամբ 'ի կուսէն ծնար Աստուած և մարդ, ողորմեա մեզ :

Զայնիւ առ քեզ տէր պաղատիմք, և առաջի քո անկանիմք, աղաչանօք Աստուածածնին՝ շնչո 'ի մէնջ զբոց հնոցին. տուր արտասուօք զմեղս ջնջել՝ և վերատին զմեզ նորոգել. յոր օրհնեցաքս ազգ երկրածին, տամք զօրհնութիւն պրաղոյդ կուսին :

Օրհնութիւն Կուսին .

Ամենագովելի և քան զերկինս բարձրագոյն , որ զանհասանելի ըզ-տէրն յորովայնի քումմ կրեցեր , և ցնծութիւն աշխարհի ծնար . վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծա-ցուցանեմք :

Յարգանդի կրեցեր որ յառաջ քան զյաւիտեանս 'ի հօրէ զբանն , և ծնար մարմնով , զքեզ և զծնեալն 'ի քէն մեծացուցանեմք :

Որ զարարչակից բանն գոյացեալ ստուգապէս աշխարհի ծնար , ուրախ լեր անհարանացեալ մայր :

Քեզ պարտական եմք երկրպա-գութեամբ ունել շնորհ տիրամայր , որ Աստուծոյ 'ի ծառայի կերպա-րան ստեղծման եղեր պատճառ . ուստի զպատկեր նախահօրն 'ի քէն ստացեալ նորոգ հաստատեալ՝ գո-հաբանեմք զսուրբ տիրամայրդ :

Քեզ զԱդամն նոր հոգեղէն՝ 'ի չափ հասակի առաջնոյն տեսաք. քեզ զարեգակն արդարութեան՝ կենցաղակից մեր կցորդ ստացաք. քեզ զանժամանակ բանին էութիւն՝ սկսեալ 'ի Դաւթայ պատմեցաք. քեզ զանհամեմատն մարդոյ պատ-կերի՝ մեզ նմանատիպ գործով գրե-ցաք։ Ապա յիրաւի և արժանապէս հոգեշարժ քնարիւք զքեզ բարե-համբաւեմք սուրբ Աստուածածին։

Ողջոյն ընդ քեզ թագուհի, մայր և աղախին Քրիստոսի. պարզ և մա-քուր հայելի, բարձոյլ երկանցն Եւայի։

Աստուածածին շնորհալից, կոյս անարատ և անբիծ. ծընար զԱ-ստուած դու որդւոյ. Մարիամ կոյս տալլեթայ։

Ցոյս և ապաւէն՝ ծնար, զորդին միածին՝ անհայր, գոլով 'ի հօրէ ան-մայր. մայր Մանուէլի սուրբ կոյս։

Աղերս առ Ծնօղ բանին .

Արեւելք գերարփին և օթարան լուսածին , զանմայր ծնեալն առաջին՝ ծնար անհայր յերկրորդին . բարեխօսեա միածնին Աստուածանին մայր բանին :

Զմայրդ լուսոյ բանին Աստուծոյ , որ եղեր արեւելք արեգականն 'ի մեզ ծագողին , բարեխօս ունիմք փրկել զմեզ 'ի փորձութենէ :

Զի 'ի քէն ցնծութիւն ծնաւ տիեզերաց նախայաւիտեան բանն՝ փառակից հօր և սուրբ հոգւոյն , զնա անդադար աղաչեա վասն անձանց մերոց :

Սրբուհի պայծառ առագաստ փրկչին Քրիստոսի , և նորուն խակ տեսաւորիչ վասն մեր . ծունր կրկնեացի արժանապատիւ քումդ պատկերի . հայցեա վասն մեր առ ծընեալդ 'ի քէն Աստուած 'ի մարմնի .

Փառք քեզ Մարիամ քաղցրագուլթ ծնողիդ։ Այն թագաւորին, այն նորածին փրկչին, զքեզ պսակողին, փառք յաւիտեանս. ամէն։

Մայր սուրբ. (Տես յէջ 14.)

Ներբող բերկրանաց առ Մարիամ մայր որդւով բերկրեալ.

Ուրախ լեր բերկրեալ ամենասուրբ կոյս, որ ծնար աշխարհի զարդարուլթեան արեգակն, որ լուսաւորեաց զաշգս որդւոց մարդկան։

Ուրախ լեր բերկրեալ՝ դուռն կնքեալ, որ ծնար աշխարհի զլթագաւորն Քրիստոս, որ նստի 'ի վերոյ անարուեստ աթոռոյ։

Ուրախ լեր Մարիամ սուրբ Աստուածածին, տիրապէս պատուեալ մանրուր կուսուլթեամբ. արքայուհի դշխոյ ամբծուլթեամբ։

Ուրախ լեր Մարիամ կոյս անապական, լեառն վիմածին՝ տա-

ՀԱՐ տիրակիր, ամենոր փառաց արքային։

Ուրախ լեր կոյս անարատ մայր անհարանացեալ, տաճար լուսակերտ պահեալ Յիսուսի, հոգւոյն սրբոյ խորան հանգստի։

Ուրախ լեր դուստր լուսոյ մայր անհարանացեալ, մաքուր անբիծ սրամիտ աղաւնի, հաւիկ սիրալի, ձայն քո տատրակի։

Ուրախ լեր հարսն երկնային կոյս սուրբ աննման, հարսն պանծալի՝ և 'ի կանայս օրհնեալ սրբուհի. քնարդ երկնային՝ քաւիչդ Եւային։

Ուրախ լեր երկին վերհագոյն՝ քրովբէ. խակուհի մաքուր՝ Մարիամ, լուսին աննման։

Ուրախ լեր սիւն հրեղէն՝ լուսոյն աշտանակ. ղամպար գիշերի՝ ճրագ լուսատու Մարիամ, մթան գիշերի։

Ուրախ լեր մայր անձառ լուսոյ սուրբ Աստուածածին. թագուհի փառաց՝ անուն քո սիրոյ, ժառանգորդ եղեր Մարիամ վերին ամենոյ։

Ուրախ լեր ամպ թեթեւ գեղմն իմանալի, ցօղ գարնանային, ուսեալ պատկին, փափաքեալ ցանկամ Մարիամ քո Ճոխ պատկերին։

Խնդա Մարիամ՝ որ եղեր մայր Քրիստոսի. խնդա տաճար բանին Աստուծոյ. ցնծա և զուարճացիր հարան 'ի յերկրէ երկնից, 'ի Լիբանանէ դիմեալ յեօթնատեղեան խորանս. հարան զգեցեալ լուսով աստուածականաւ, զարեգակն արկեալ զքեզ և ընդ ոտիւքդ զլուսին ստուերատեսակ։

Ցնծա իմանալի արեւելք. քանզի քեզ ծագեաց մեզ լոյս երեսաց Քրիստոս. լեր բարեխօս վասն անձանց մերոց, մեզ բարեխօս՝ մեղաց քաւարան, դուռն կենաց և արքայութեան, մայր դթութեան և ողորմութեան։

Մաղթանք առ ամենապայծառ քերկրեալ միշտ կոյս.

Մայր լուսոյ, լեր մեզ լուսատու։
Մայր միածնին, լեր։
Մայր բանին, լեր։
Տիրածին կոյս, լեր։
Իմանալի լոյս, լեր։
Քաղցր առաւօտ, լեր։
Արեւելք իմանալի, լեր։
Արեւելք գերարփի, լեր։
Արեգականն օթարան, լեր։
Օթարան լուսածին, լեր։
Ճեմարան մեծին, լեր։
Լեառն վիմածին, լեր։
Ծնօղ արուսեկին, լեր։
Լուսածին ամպ, լեր։
Ամպ թեթեւ լուսաւոր, լեր։
Սիւն հրեղէն, լեր։
Նմանօղ երկնից, լեր։
Երկին վերհագոյն, լեր։
Պայծառ երկինք, լեր։

Աստղ առաւօտի , լեր ։
Պայծառ քան զերկինս , լեր ։
Քան զերկինս բարձրագոյն , լեր ։
Քան զարեգակն պայծառագոյն , լեր ։
Ակն արեւու , լեր ։
Ակն լուսատու , լեր ։
Ակն արփիափայլ , լեր ։
Աղբիւր անապառ լուսոյն , լեր ։
Վառարան աստուածային բոցոյն , լեր ։
Ընդունարան եօթնարփեան շնորհաց , լեր ։
Ընդունող լուսոյ , լեր ։
Վերընկալ աստուածային բանին , լեր ։
Գանձ կենաց՝ աստուածային , լեր ։
Գանձ անապական , լեր ։
Ձոյլ ոսկի , լեր ։
Բիւրեղ պատուական , լեր ։
Միայն օրհնեալ սրբուհի , լեր ։
Տիեզերաց տիրուհի , լեր ։
Շնորհ աշխարհի , լեր ։
Յոյս ապաստանի , լեր ։

Ապաշխարութիւն առ Մայր աքսանչելի շուշանի.

Աստուածածին անարատ կոյս առ քեզ ապաւինիմք, բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց մերոց։

Սուրբ Աստուածածին՝ ծնող Աստուծոյ, վասն մեր մաղթեա Մարիամ, զՅիսուս որդին քո։

Դու ծնողագուն մատանցդ աղերսիւ՝ մաղթեա զառ 'ի քէն մարմնացեալ որդիդ։

Ազատեա զորդին զքոյդ միածին, տալ խաղաղութիւն երկրի երկնային։

Որոնեմք 'ի քէն աղերսիւ բանի՝ որ ես քաղցրալուր գրաւ աշխարհի. միայն երանեալ և բարեբանեալ, հօրին հաճութեամբ հովանաւորեալ. որդւոյն ծնող, հոգւոյն վերընդունող, երրորդութեան փառացն տարող։

Բաբունեան Ճշմարտի տաճար անքննին, մայր Աստուծոյ՝ սուրբ Աստուածածին. ինձ մեղաւորիս տառապեալ անձինս, տիրաբար գթա Մարիամ աստղ առաւօտին։ Պաղատեա վասն իմ առ քո միածին, գասակից առնել Մարիամ 'ի յաջակողմին։ Երեւեալ լուսին բակ արեգակին, վերաբերեա զիս Մարիամ՝ ժամ ոգեվարին։

ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

ՍՏՈՐՈԳԵԼԻՔ ԱՒՈՒՐՍ

Իբրեւ որդիս քան թէ պաշտօնեայ՝ ծնողին Յիսուսի կենցաղակից գոլով մաքրաբար, արժանապէս շուրաժին մարմնոյն գովեալ հանգստեանն սպասաւորեցին սուրբ առաքեալք.

ԱՌԱՒՕՏԻՆ

Քարոզ.

Զանազանական կոյսն Մարիամ Աստուածածին խոստովանի սուրբ եկեղեցի, ուստի տուաւ հացն անմահութեան և բաժակ մեզ ուրախարար. տուք օրհնութիւն նմա հոգեւոր երգով:

Զծնեալն 'ի սրբոյ կուսէն ընկալ-
ցուք 'ի սիրոս մեր հաւատով՝ որպէս
երբեմն 'ի գիրկսն Սիմէոն, հաղոր-
դելով սուրբ խորհրդոյ մարմնոյ
փրկչին՝ անապական և կուսածին։

Աղօթք.

Անոխակալ և բարեգութ բարե-
խօսութեամբ սրբուհւոյ անարատ
մօր քո և կուսի՝ մաքրեա զմիտս և
զխորհուրդս, զի և մեք հաղորդես-
ցուք սրբութեամբ ընդ սրբոց քոց
առաքելոց. աղաչեմք փրկիչ ողոր-
մեա։

Յաստուածային կայծակունսն 'ի
սրոբէիցն անհպելին՝ անմաքրապէս
մերձեցաք դող պարտական քում
խորհրդոյ. շնորհեա զնոյն մաք-
րութեամբ 'ի թողութիւն մեղաց
մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Ա-
ստուածածնին։

Ժողովեալքս 'ի քէն հայցեմք
ընդ ժողովեալ մեռաւանին, որ ըզ-

կենարարդ քո մարմին բաշխեալ ե-
տուր ընդ բաժակին. շնորհեա և
մեզ տէր ընդ նոսին հաղորդ լինել
քոում սեղանին. կենաց հացիդ՝ յոր
փափաքիմք, և ըմպելոյդ՝ ուր ծա-
րաւիմք։

Օրհնութիւն Կոչման.

Ծառ կենաց տնկեալ յագին
տուրբ կոյս, որ զհայրածին բղխե-
ցեր զծաղիկ, և եռուր 'ի ժամու
զորդին պտուղ մարդկան. զորոյ ըզ-
մարմին Ճաշակեալ անմահացաք
յուսով. վասն որոյ օրհնաբանեմք
զքեզ զօրհնեալդ 'ի կանայս։

Բանաւոր երկիր տիրուհի՝ և ան-
դաստան մաքուր 'ի փշոց մեղաց, որ
զբոյսն երկնային առանց սերման
ծնար, որով զկենացն եռուր զհաց
սովեալ բնուլթեանս. վասն որոյ
օրհնաբանեմք զքեզ զօրհնեալդ 'ի
կանայս։

Օրհնեալդ միայն 'ի շրթունս ան-

բիծս լեզուաց երկանկաց, և օրհ-
նեալ պտուղ որովայնի քո. ո՛վ
ծառ կենաց ծաղկեալ տիրուհի, որ
եռուր մարդկան 'ի ժամու պտուղ
զհացն կենաց զնչեալն 'ի յերկնից։

Մինչն օրհնեալդ 'ի կանայս՝ մայր
և միշտ կոյս և խմանալի լոյս, որ 'ի
կուսական քուսմ բարուենակէ զան-
մահարարն ողկոյզ հասուցեր. որով
զմայլեցաք յուրախութիւն հոգե-
ւոր։

Քեզ զանմատոյց հուրն կիզանող՝
անապական ծագմամբ ծախեցաք.
քեզ զգովեալ՝ բարձոյն մեղաց՝ իբր
զգառն ճաշակ ընկալաք։

Թէ չէր 'ի քէն աճեալ ուղէշն
երկնային, ոչ էր պտղաբերեալ զան-
ճաշակելին 'ի շրթանց մեր հաղոր-
դութիւն. և թէ չէր թափեալ իւղն
անապական 'ի վերհագուստն, ոչ էր
զմեզ օծեալ։

Քեզ երգեմք զերգս օրհնութեան
որ երանեալդ ես 'ի կանայս, տա-
պանակ կատկի սափոր ոսկի լն մա-

նանայիւ. սեղան խորհրդոյ անմահ-
արար կերակրոյ, և դեղ կենաց
մեռեալ բնութեանս։

Ուրախացիր տուն անթառամ,
անեղ աջոյն՝ միշտ յարաժամ, պը-
տուղ բերեալ մեզ բարեհամ։ Բա-
րուն ակ բերող զուրախարար ող-
կոյզն, որով զմայլեցաք յանմա-
հական բաժակն։

Ուրախ լեր սափոր ոսկի երկնային
հացին, որ զառ 'ի վերուստ իջեալ
զմանանայն կենաց՝ նորոյս պարգե-
ւեալ կերակուր Իսրայէլի։

Մեծացուսցէ. (Տես յէջ 5.)

Աղերս առ Մայրն կենաց.

Սրբուհի Մարիամ սափոր ոսկի
և սասպանակ կտակարանաց, որ զ'ի
վերուստ զհացն կենաց պարգեւե-
ցեր քաղցեալ բնութեանս, առ նա
միշտ բարեխօսեա վասն քաւու-
թեան մեղաց մերոց։

Որ վառեցար 'ի յարփուոյն, և ոչ կիզար ըստ մարենուոյն, այլ եռուր զհացն կենաց կերակուր բանաւորաց. բարեխօսեա առ Քրիստոս ջնջել զգիր մեղաց մերոց։

Յազգէ մարդկան կոյս անապական՝ դու ընտրեցար տաճար տիրական. Աստուածածին առիթ բարութեան, մաքրեալ հոգւով որդւոյ մարմնարան. բարեխօսեա առ անմահ արքայն՝ յաւուրս մեծի շնորհաբաշխութեան։

Մայր կենարարին հաճոյական կամաց, հայցմամբ պաղատեա առ ծնեալն 'ի քէն Աստուած. արեամբ փրկելոց քոյն միածնի՝ հօտիս, լեր միշտ բարեխօս ողորմածին ծնօղ։

Սուրբ զԱստուած". (Տես յէջ 7.)

Ընկալ տէր։ Հայր մեր։ Ողջոյն։

ԵՐԵԿՈՅԻՆ

Քարոզ.

Աստուած է՝ որ ծնաւ 'ի միշտ կուսէն 'ի փրկութիւն ազգի մարդկան, լուսաւորելով զտիեզերս 'ի գիտութիւն Ճշմարտութեան, և բարեբանեմք զնորա բարեգթութիւնն:

Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին պահեսցէ զեկեղեցի իւր սուրբ, և 'ի միւսանգամ գալըստեանն իւրոյ նորոգեսցէ 'ի փառս:

Եկեղեցիք հեթանոսաց հաստատեալք առաքելովք, զբանն՝ որով երկինք հաստատեցան, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

Խորան արքութեան կանգնեցաւ սուրբ եկեղեցի, և Քրիստոս թագաւորն 'ի սմա պատարագեալ. եկայք հաւատացեալք երգեսցուք Քրիստոսի երգ նոր:

Աղօթք.

Լուսով աստուածութեան քո Քրիստոս լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի, պահեա զսա անշարժ յաւիտեան՝ ընդ հովանեաւ մօրն լուսոյ՝ քո սուրբ ծնողի։

Բացան դրունք հաւատոյ նոր Սիոնի ընդունել զանմահ փեսայդ յառագաստ. բաշխէ զմարմին քո և զարիւն. պահեա զսա անշարժ յաւիտեան՝ ընդ հովանեաւ հարսին լուսոյ՝ քո սուրբ ծնողի։

Որ զնորհուրդ անապական տնօրէնութեանդ քո 'ի սրբոյ կուսէն՝ տպաւորելով տապանակն աստուածային ուխտի կատարանաց բանիդ Աստուծոյ, փառաց անեղիդ տեղի հանդստեան. փառաց թագաւոր պահեա զմեզ ընդ հովանեաւ պաշտպանութեան մերոյ դշխոյի՝ քո սուրբ ծնողի։

Օրհնութիւն Կուսին .

Զանձառելի զլոյս աստուածութեանն տնօրինաբար կրեցեր 'ի քում յորովայնի Մարիամ մայր և կոյս , օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք :

Ի մանաւոր լուսոյն զարհուրեցան դասք առաքելոցն . այլ 'ի քեզ բովանդակ կրեցեր զհուր աստուածութեանն Մարիամ մայր և կոյս , օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք :

Առաքելոցն հովանացեալ ամպ լուսեղէն , գերագոյն քեզ հոգւոյն սրբոյ և զօրութիւն բարձրելոյն հովանաւորեալ սուրբ Աստուածածին , օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք :

Հիմն եղեր եկեղեցւոյ , խորան եղեր հոգւոյն սրբոյ . 'ի հրեշտակաց սպասաւորեալ , Գաբրիել քեզ ասէտեաց . ազգ և աղինք զքեզ մեծացուցանեմք :

Կենդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխտիս, որով ելք յերկիր աւետեաց հորդեալ հոգւով 'ի քեզ տպաւորեալ բանին. վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք։

Բանաւոր տաճար եղեր դու երկնաւոր Թագաւորին. գեղեցիկ գեղ գովելի գեղեցկաշէն քաղաք ամուր։

Սրբութիւնքք սրբութեանց դու կոչեցար մայր Սիոնի. վայելուչ այգի եղեր յանկիւնս տանն եկեղեցւոյ։

Տունկ եղեր տանն Աստուծոյ նոր ձիթենի աստուածատունկ. ցաքուն բերեալ պտուղ յուրախութիւն տիեզերաց։

Տունկդ կենաց պտղոյն օրհնութեան, ազգաց և ազանց արմատդ օրհնութեան։

Մայր հիմնադրութեան հաստատութեան եկեղեցւոյ, և ծնող անարատ բանին Աստուծոյ. օրհնեալ յաղին և յազգս ամենայն։

Քերովբէական թեւօք պարա-
ծածկեցար սրբուհի Աստուածա-
ծին՝ կոյս և մայր և բնակարան աս-
տուածութեանն, վերօրհնեալ յա-
մենայն առաքելական քարոզու-
թեանց։

Ո՜վ գերագոյն տապանին ոսկւոյ,
տախտակ գրոյն բանին Աստուծոյ.
և տաճարին գտեալ վեհագոյ դա-
բիրային սեղանոյ սրբոյ. 'ի դասուց
մարգարէից և յերկնային առաքելոց
օրհնաբանեալ տիրուհի։

Աղերս առ Տիրամայրն մայր եկեղեցւոյ.

Տաճար լուսոյ անատուերին և ա-
ռագաստ անճառ բանին, որ զնախ-
նոյ մօրն Եւայի բարձեր զանէծ-
սին տրամալի. հայցեա որդւոյ քո
միածնի հօր հաշտութեանն միջնորդ
դի, բառնալ 'ի մէնջ զխռովութիւն
և տալ զոգւոց խաղաղութիւն։

Յանկ բազկատարած և միջնորդ բարւոյ. վիւսեա մաղթանօք Մարիամ՝ զթագ եկեղեցւոյ:

Աստուածածին մայր լուսոյ՝ տաճար բանին Աստուծոյ. զԱստուած ընդ մեզ հաշտեցո, ամուր խարիսխ մեր յուսոյ:

Քրիստոնէից ազգ համօրէն, ըզքեզ ունին յոյս ապաւէն. բարեխօսեա քո միածնին՝ պահել անշարժ զեկեղեցին. և պարգեւել զխաղաղութիւն, բառնալ 'ի մէնջ զխռովութիւն. աճումն տալ սիրոյ շնորհաց, զթշնամին ջնջել 'ի բաց:

Մայր սուրբ. (Տես յէջ 14.)

Ներբող առ Մարիամ խորհրդաւոր խորան.

Ամենօրհնեալ սուրբ Աստուածածին՝ միջնորդ հաշտութեան և մայր անմահին, աշտանակ լուսոյ և ջահ երկնային, սեղան խորհրդոյ երկնային հացին:

Մաքուր աղաւնի տատրակ բանաւոր, համասփիւռ ծաղիկ շուշան լուսաւոր. նոր մանանային ոսկեղէն սափոր, հոգեպէս հրալից բուրվառ խնկաւոր. Մայր Աստուծոյ բանին միաւոր, ողկոյզ կենաց բաժակ հոգեւոր:

Սափոր ոսկի և սուք Ճեմարան, տիպ աննման սուրբ կոյս Մարիամ. տապանակ կտակի նոր ուխտին լրման, և խորհրդաւոր խորան սրբութեան:

Ո՛վ նորանկար խորան խորհրդոյ՝ տաղաւարին հօրն հաւատոյ. ո՛վ դու նման ծառոյն սաբեկայ՝ բերող խոյին պատարագելոյ. բարձրաւանդակ սանդուղք Ճեմելոյ՝ քան զՅակոբայն երկնաբերձ գոլոյ:

Խորան լուսոյ արքային հարան մաքուր փեսային. նոր բուրաստան ծաղկերանգ ողկուզաբեր բարուրնակ: Ուրախութիւն անմարմնոցն, հարան 'ի յերկրէ երկնայնոցն. ծրար քառիցն խնկոց հոգւոյն՝ յոգիս խառնելոց:

Սուրբ հոգւոյն հրոյ աստուածընկալ բուրվառ, տուփ անոյշ խնկոց տիեզերաց բուրեալ. նորահրաշ շուշան վերաբուսեալ'ի փշոց, քաղցրահամ ճաշակ բուրումն անուշահոտ։

Խնկաբեր ծառ ծաղիկ անթառամ, ծագումն արեւու ծրար լուսատու։ Ակն տիրագոյն շափիղայի, կայծ կենդանի, զմրուխտ նոր ուխտի։ Լեառն վիմածին, յորդահոս վտակ ուրախարար վերին քաղաքի։

Նոր եդեմ բանաւոր տնկոյն, նոր Ադամն'ի քէն՝ հնոյն նորոգօղ. երկնագոյն օդամանուած շար, բեհեզ ծիրանի նիւթ նոր խորանի։

Նոր դրախտ'ի յերկրի տնկեալ, ծաղկօք զանազան փայլեալ. վարդն ուրախարար վառեալ, մայր Մանուէլի սուրբ կոյս։

Երկիր անձնական բանական բուսոյն, և զգայական անդաստան կենացն հացի. և վայր դալարաբեր հայրական ծոցածին ծաղկին, և

ծառ երկնուղէշ անթարշամ խընձորին :

Գործարան գոյութեան լուսատու մարգարտին . և լեառն արձանունակ երկրալիր վիմին :

Զգեստ լուսանիւթ երկնից արքային . օթոց սրբութեան անմահ բնակողին . յարկ վայելչութեան անեղ շինողին . առիթ մարդկութեան բանի անեղին . գործի մարմնութեան՝ վերին բնութեան : Մեղ բարեխօս՝ մեղաց քաւարան , դուռն կենաց և արքայութեան , մայր գթութեան և ողորմութեան :

Մաղթանք առ Մարիամ տաճար բանին .

Ամենասրբուհի Մարիամ , լեր մեզ օգնական :
Միայն օրհնեալ սրբուհի , լեր :
Ծնող Յիսուսի , լեր :
Աղախին և մայր կենաց , լեր :

Մայր վերաձգողին , լեր ։
Սիրոյ անմահ փեսային մայր , լեր ։
Պսակ կուսից տիրամայր , լեր ։
Հարան երկնային , լեր ։
Տաճար լուսոյ , լեր ։
Տաճար սրբութեան լեր ։
Տաճար անապական , լեր ։
Տաճար անխախտելի , լեր ։
Անարատ տաճար , լեր ։
Անձնաւոր տաճար , լեր ։
Լուսեղէն տաճար , լեր ։
Առագաստ արարչին , լեր ։
Առագաստ Աստուծոյ բանին , լեր ։
Խորան լուսոյ , լեր ։
Խորան հոգւոյն սրբոյ , լեր ։
Տապանակ կտակի բանին , լեր ։
Սուփոր ոսկի երկնային հացին , լեր ։
Կենաց տապանակ , լեր ։
Աստուածագիծ տախտակ , լեր ։
Անտանելոյն տաղաւար , լեր ։
Տաղաւար սուրբ հոգւոյն , լեր ։
Բանին հօր մարմնարան , լեր ։
Բնակարան սուրբ հոգւոյն , լեր ։
Բնակարան աստուածութիւն , լեր ։

Բնակ հրեղէն աստուածու-
թեան, լեր։
Ոսկեսպասաց բուրվառ խնկալի, լեր։
Եօթնաջահեան աշտանակ ոս-
կի, լեր։
Ռեսին քաղցրածոր, լեր։
Ծառ կենաց, լեր։
Գերահրաշ ծաղիկ, լեր։
Դրախտ Աստուծոյ ծաղկալի, լեր։
Աղբիւր գեղոց քառակի, լեր։
Օգնական աշխարհի, լեր։
Հիմն եկեղեցւոյ, լեր։
Խարիսխ յուսոյ հաւատացե-
լոց, լեր։

Ապաւինութիւն առ Մայր թանիւն.

Առ քեզ ապաւինիմք՝ խորան և տաճար Աստուծոյ բանին՝ Մարիամ մայր և կոյս, բարեխօսեա՛ առ Քրիստոս վասն անձանց մերոց։

Առ քեզ պաղատիմք մայրդ Աստուածածին, ջուր զովացուցիչ Մարիամ՝ ռեսին քաղցրածոր։

Եդեմ շնչական տուն անմահութեան, սուրբ կոյս Մարիամ մայր ողորմութեան։ Արբո՛ զծարաւեալս ջրոյն կենդանութեան. շնորհեա՛ պատքելոյս բաժակ փրկութեան։

Զմանանեալս մահու փրկեա՝ կենդանի լոյս. հա՛ռ զձայն լալեացս՝ բերկրութիւն. զխորտակեալս կազդուրեա՝ դեզ կենաց. 'ի կործանեալս յիս ակնարկեա՝ հոգելից. ողորմութեամբ ինձ պատահեա՝ կըատակ նուիրեալ. յորմէ հայցեմ զնորոգութիւն կենաց՝ և պաշտպան զանիրամօրդ ձեռնտուութիւն։

ՈՒՐԲԱԹ

ՍՏՈՐՈԳԵԼԻՔ ԱՒՈՒՐՍ

Մայր ցաւագին Ծնող փրկչին, կայր առ խաչին.

ԱՌԱՒՕՏԻՆ

Քարոզ.

Ցողէր արտօսրը ցաւագին՝ մայր տեառն, որ կայր մերձ առ խաչին, յորժամ լսէր ըղձարաւին բարբառելոյ իւր միածնին:

Իւրեալ միջաբեկ և արտակոտոր՝ մայրն Մարիամ հառաչմամբ յորդոր, կայր գրկապատեալ ոտից ահաւոր՝ և 'ի վերս հայէր յորդին միաւոր:

Արեամբ դառինն անարատի փրը-

կեալ ժողովուրդք՝ յաւուր ցաւոց մեր անտանելւոյն՝ գովեցէք զմիածինն եկեալ կամաւ 'ի մահ խաչին, կարեկցելով իւր ծնողին. յոր օրհնեցայք յանիծից նախնւոյն։

Ողբ Աստուածածնին.

Աստուածածին կոյսն Մարիամ՝ կայր առ խաչին իւրոյ միածնին, հեղոյր արտօսր կսկծմամբ սրտի, և զայս ասէր ձայնս ողորմելի. այ ո՜հ այ ո՜հ, զքեզ 'ի խաչ տեսողիս, հազար եղո՛ւկ մօրս այրած սրտիս։

Որդեա՛կ որդեակ՝ Յիսուս իմ որդեակ, աչացս լոյս մօրս քո կուսի. իմ միածին գառնդ անպարտական, ընդ որ մեղաց կաս այժմ 'ի խաչիդ. այ ո՜հ այ ո՜հ, զքեզ։

Ահա եհաս բան քո Սիմէոն, ահա սրով սիրտս խոցոտի. զիմ միածինն անպարտ տանջեցին, կատականօք հեթանոսք հարին. այ ո՜հ։

Կուսութեամբ ծնայ 'ւամբիծ սնուցի, անմեղ կաթամբ զքեզ կերակրեցի. և արդ դու մերկ կաս 'ի ծարաւի, քացախ ընդ ջրոյ տան քեզ ըմպելի. այ ո՜հ։

Զի՞նչ մեղար որդեակ՝ կամ զի՞նչ գործեցեր, զՋուրն 'ի գինի նոցա փոխեցեր, որ քեզ ըզլեզի այժմ արբուցանեն, և 'ի նայելըս մայրըս խորովի. այ ո՜հ։

Զանդամալոյծսըն հաստատեցեր, ըզկարկամեալ ձեռս ողջացուցեր. և արդ 'ի խաչդ ելեալ բարձրացար, ձեռք քո և ոտք եղեն բեւեռեալ. այ ո՜հ։

Իմ միածին կեանքըդ մեռելոց, թըքով տայիր լոյս կուրացելոց. ընդէ՞ր հրեայք զքեզ 'ի խաչ հանին, և յանիծից մահըն մատնեցին. այ ո՜հ։

Ո՞վ ինձ մխիթար 'ի կեանք աշխարհիս, կամ ո՞վ սդոյս լինի փարատիչ. երբ ըզմինդ առին յինէն խլեցին, հանդէպ աչացս իմոց խաչեցին. այ ո՜հ։

Պատուախնամեալ Յիսուսի սու-
տուշաժամօրն իւր կոչի, ան-
պակաս ծնողի՝ մաքուր և սուրբ
տաճարի.

Դու իմ խորան սրբութեան՝ և
առագաստ մաքրութեան, դու իմ
տաճար բնակութեան՝ անձառ բա-
նիս մարդկութեան։

Դու մի՛ տրտմիր բերկրալի, զքեզ
ոչ թողից յաշխարհի. արդ Յով-
հաննէս քեզ որդի՝ իմ աշակերտ
սիրելի. վասն այնորիկ ես ինձի՝ որ
մեծ խորհուրդ կատարի. մահուամբ
խաչիս սոսկալի՝ յանցանք նախնոյն
քաւեցի։

Ով՝ որ խաչիս հետեւի, պաշտել
ըզսա յօժարի. յիմ գալստեանն
յերկրորդի, նա ընդ աջմէ իմ դասի։

Փառաց լինի արժանի, և արդա-
ւոցն երամի. փառաւորել զիս ընդ
հօր՝ և ընդ հոգւոյն Ճշմարտի։

Յաւանդական հոգւոյ Յիսուսի փրկչին, քաղեցաւ ոգիք իւր սուրբ ծնողին. նառնալ Մարիամ դէմ քաւարանին, յոգւոց եղանէր ընդ մահ միրածնին.

Յիսուս որդի՝ մօրս քո հոգի, աչացս իմ լոյս՝ որ խաւարեցար. թոռ խաւարի ինձ լոյս արեւուն, թոռ շինչանին ինձ պարք ասատեղաց:

Յիսուս որդի՝ մօրս միաւոր, աչինցս լոյս՝ Ասուած ահաւոր. այ գեղազարդ աչեր ծովական, այսօր շինչար 'ի տեսանելոյ. այ գերագոյն գլուխ գանգրահեր, խոնարհեցար որպէս մեռելոյ. այ հրաշագործ բերան բերկրալիր, դու լռեցեր այժմ 'ի խօսելոյ. այ սքանչելի բաղուկ բարձրելոյ՝ դադարեցար 'ի նեղգործելոյ. այ սրընթաց գարշապար յուսոյ, խափանեցար 'ի յեր-

թեւեկոյ. այ գեղաղարդ մարմին Աստուծոյ՝ անշնչացար որպէս մեռելոյ։

Ո՞վ պատմէր Նոյի կամ նախատեղծին, ահա էլ 'ի խաչ իմ Աստուածորդին. ո՞վ սուրբ մարգարէք հնոյ օրինին՝ պատմեցէք զիմ անցս իմ մօրն Եւային։ Թողեալ 'ի յերկինս զաթոռն երկնային՝ տէրն արարածոց, ստեղծօղն աշխարհի 'ի խաչ մեռանի վասն արարածոց։

Ե՛կ Յովհաննէս՝ եկ որդեակ և դու, իմ միածնին սիրուն աշակերտ. առցուք զմարմինն ողջագուրեսցուք, և արտասուօք զնա թաղեսցուք։

Ո՛վ կենաց տուօղ տէր իմ և որդի, ո՛հ թէ առնես ինձ այցելութիւն. անմեղդ կոխես զմահուբառնութիւն, և տաս տեսանել ինձ զքո յարութիւն։

Աղօթք.

Ինչեր յերկնից 'ի հօրէ և մարմնացար 'ի կուսէն, համբերող փրկիչ՝ վասն մեր զմահ ճաշակեցեր:

Ի խաչ ելեր բանդ Աստուած մարմնացեալդ 'ի կուսէն կամաւ հօր և հոգւոյն՝ 'ի փրկութիւն ազգի մարդկան, 'ի դերեզմանի եդար անապական, զի զմեռելութիւն մեր բարձեր, զդերեալսն փրկեցեր 'ի ձեռաց մահու:

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ ընկալ տէր զմաղթանս մեր, յորժամ յարեւելից լուսածագիս անճառ հրաշիւք՝ կարասցես առնելով զյաղթանակ սուրբ նշանն. ապաչեմք զքեզ տէր՝ պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ:

Զկենդանագիր անարատ ծնողի քո արկանեմք առաջի անոհնակալ տէրութեանդ քո, յորժամ դաս

փառաք հօր դատել զԹշնամին խաչի քո, ներեա յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քո և կուսի. աղաչեմք զքեզ տէր պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ։

Օրհնութիւն Կուսին.

Ծնեալն 'ի քէն 'ի խաչ ելեալ, և 'ի յաթոռ փառաց ընդ Հօր. անարգեալ 'ի մարդկանէ, փառատրութեամբ էութեամբ երկրպագեալ. վասն որոյ զքեզ Աստուածածին և կոյս, բարեբանեմք զմայր և զաղախին փրկչին մերոյ։

Քեզ բացաւ սրովբէական դուռն դրախտին, և քեզ տուաւ մեզ փայտն անմահութեան. զոր 'ի նմա զենեալն անմահ՝ զէն յաղթութեան մեզ պարգեւեաց. հոգեւոր երգով զքեզ սրբուհի մեծացուցանեմք։

Քեզ հաճեցան խմանալիքն ընդ հոգեղէնքս, և քեզ մերձեցաք 'ի

փայտն կենաց. քեզ երանեն ամենայն ազինք։

Քեզ դատելոյն 'ի չարագործաց՝ որպէս Աստուծոյ Ճշմարտի երկրպագեցաք. քեզ զանծանօթն հօր էութիւն՝ ազգակցապէս օրհնաբանեցաք. սակս որոյ լի բերանով ըզպաշտպանդ փրկութեան այսմ մեծըս խորհրդոյ՝ երանեմք զտիրուհիդ սուրբ Աստուածածին։

Քեզ զմուրհակ պարտուց անէծիցն 'ի յաւազանին ջուր ընկղմեցաք. ապա յիրաւի զմատակարարդ և զսպասաւոր մեծս խորհրդոյ՝ երանեմք ըղձական երդոք զանժամանակն էութեան երջանիկդ ծնօղ։

Ներբողեալ ես մաքուրդ փայլումն՝ կրօղ արարչին առաքինութեան, վսեմական վարուց նախընթաց և յառաջաշաւիղ սուրբ Աստուածածին. վասն զի որպէս երեւեալն 'ի քէն միածին՝ անդրանիկ բնութեանն հօր՝ սկիզբն ասի հետեւման խաչունակ մահակիր Ճգանց, այսպէս

երանեալդ և բարեբանեալդ՝ դեր-
օրինակ ցուցման տեսակի աստուա-
ծակրօն կարգաց ծագեցար։ Վասն
որոյ շնորհ ունելով քեզ օրհ-
նեալքս 'ի յորդիդ քո փրկիչ աշ-
խարհի՝ երանեմք քեզ սուրբ Ա-
ստուածածին։

Խրախացիր յաւէտ հրճուանօք
բերկրեալդ 'ի կանայս, որ դժուար-
ընդել դաստիարակաւ խաչին վար-
ժեալ կրթեցար՝ որդւոյ քո կցոր-
դակցութեամբ միասեւակն ժուժ-
կալութեամբ՝ կրելով զերաշխէպ
վշտաց ծնիցելոյդ 'ի քէն տեառն,
մշտաջարչարն մեռելութեամբ՝ անձ-
նատուչոր տօթով խարուկեալ։ Իբ-
րեւ զորոջ անարատ քահանայական
նուիրմամբ 'ի վերայ սիրոյ սեղանոյդ
մատեար՝ ասրաբոյս և ստեւադիսակ
գեղմնաբարձ մաքուր պատարագ.
'ի ճգնաւորական վարս ողջակի-
զեալ՝ քան թէ 'ի սրոյ հանդէս խող-
խողեալ։ Վասն այսորիկ 'ի նուէր
քոյ ղենման՝ հրեշտակացն պարք

պաշտպանեալ՝ ընդ առաքելոցն գու-
մար գասակցեալ՝ զմիայն արժանիդ
պատուեալ գովէին սուրբ Ա-
ստուածածին։

Մեծացուցէ. (Տես էջ 5.)

Աղերս առ Մայր ցաւագին.

Ո՛վ Մարիամ մայր Աստուծոյ՝
անմահ բանին մահացելոյ, այն մոր-
մոքմամբ սրտիւդ քո՝ ընդ մահ որ-
դւոյդ միշտ կենդանւոյ. մաղթեա՛
ընդ մեր փրկչին մերոյ՝ զմեզ ազա-
տել յահեղ հրոյ։ Բամեալ տատան-
մամբ՝ մահուամբ մեռելոյ, սուրբ
Աստուածածին՝ մայր խաչեցելոյ.
վան արտասուացըդ քո տրտմա-
գին՝ որ ցօղեցեր ընդդէմ անդրան-
կին. բարեխօսեա մեծի հզօրին, զի
քաղցրասցի 'ի մեզ ներելին։

Դու մայր անեղին՝ արտասուօք
ուժգին՝ լացեր առ խաչին. բաբու-

նէ բանին՝ զսիրտ քո տրամագին՝ սփոփեալ 'ի խաչին. և զիւր սիրելին՝ զողորմանն որդին՝ եա քեզ յիւր տեղին։ Ադամ մեր նախնին՝ և որդիք նորին՝ քեզ եմք 'ի յանձին. ցաւ նոցա սրտին՝ խոցմամբ բանսարկուին՝ քեւ փարատեացին. գոչեմք լալագին՝ մեք ողորմագին՝ լուր մայր ցաւագին։

Աղաչեմք զքեզ սուրբ Աստուածածին՝ առ Քրիստոս բարեխօսեա փրկել զժողովուրդս իւր, զոր գնեաց արեամբ իւրով։

Սուրբ զԱստուածածին. (Տես յէջ 7.)

Ընկալաւէր։ Հայր մեր։ Ողջոյն։

ԵՐԵԿՈՑԻՆ

Քարոզ.

Աղաչեսցուք զկենարարն մեր, որ դատաւորն է կենդանեաց և մեռելոց, զի արժանի արասցէ զննջեցեալսն մեր՝ մտանել 'ի յառաջասա

ընդ իմաստուն կուսանան, բարե-
խօսութեամբ կուսանաց կուսի՝ ա-
մենօրհնեալ իւր սուրբ ծնողի։

Աղօթք.

Որ հրաւիրեցեր յանմահութիւն
զաղգս մարդկան՝ անմահութեանց
բաշխող Քրիստոս, աղաչանաք Ա-
ստուածածնին այսօր հանգո՛ւ և զմեր
զննչեցեալսն ընդ սուրբս քո՝ որ
միայնդ ես մարդասէր։

Բարեխօսութեամբ սուրբ Ա-
ստուածածնի ծնողի և մօր քոյ՝ յի-
շեա զդինս արեան քո տէր, և դա-
սաւորեա յերանաւէտ՝ յանթա-
ռամ և յանտրտում 'ի կեանդ 'ի
յարքայական 'ի հանգստեանդ։

Զէակիցդ հօր զորդի՝ փառաւո-
րեմք անլռելի, որ ինքեր յարգանդ
կուսին՝ զադամային առեր մարմին,
աղաչանաք Աստուածածնին անա-
պական քում՝ ծնողին՝ ողորմեա քո

ստեղծուածոց՝ յուսով՝ի քեզ նըն-
ջեցելոց։

Հոգիդ Ճշմարիտ՝ փառակից հօր
և որդւոյ, աղաչանօք Աստուածած-
նին՝ հանգո՛ զննջեցեալսն մեր՝ի
սուրբ անունդ քո։

Հոգիդ Ճշմարիտ՝ մխիթարիչ
ազաւորաց, աղաչանօք սուրբ Ա-
ստուածածնին և ամենայն քոց սրբ-
ոց յիշեա զհոգիս ննջեցելոց մե-
րոց, և հանգո՛ ընդ սուրբս քո։

Միաբան հայցեմք՝ի քէն սուրբ
հոգիդ կենդանարար, աղաչանօք
սուրբ Աստուածածնին արժանի ա-
ռա և զմեր զննջեցեալսն մտանել՝ի
յերկնային քո սուրբ առագաստ, և
ընդ վերին զօրսն օրհնել սուրբ զեր-
ծորդութիւնդ։

Օրհնութիւն Կուսին.

Արարողին երկնի և երկրի եղեր
տաճար և առագաստ, որ զննջե-
ցեալսն մեր հրեղէն նորոգէ. զքեզ

մեծացուցանեմք՝ որ օրհնեալդ ես 'ի կանայս։

Կերակրողին տիեզերաց արքուցեր զքո սուրբ զկաթն, որ զննջեցեալսն մեր վերասին նորոգէ. ըզքեզ մեծացուցանեմք, որ օրհնեալդ ես 'ի կանայս։

Աստուածածին սուրբ կոյս՝ անհարանացեալ Մարիամ, որ օրհնեալդ ես 'ի կանայս, զքեզ օրհնեմք միշտ, որ արժանիդ ես, մեծացուցանեմք։

Աղերս ներբողական առ Մայր փրկչաբերական.

Աստուածածին անարատ մայր տեառն և կոյս սուրբ՝ բարեխօսեա առ որդիդ քո միածին, զի փրկեսցէ զմեզ 'ի սպառնալեաց գեհենոյն, և պարգեւեսցէ մեզ զերկնից զարքայութիւնն, և հանդուսցէ զհոգիս մեր ննջեցելոցն։

Լեառն վիմածին՝ աղբիւր յորդառատ, բարուրնակ ծաղկեալ՝ այդի վայելուչ, սրովբէ հողեղէն. բաբուրեալ բանին առն անօրէնութեան, տաղաւար հոգւոյն. առ ծնեալն 'ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ՝ շնորհել զթողութիւն մեր ննջեցեալոցն։

Փափկութեան դրախտին բացօղ բանալի, Քրիստոսի բարձօղ՝ նմանօղ երկնից. սափոր ոսկեղէն՝ լի մանանայիւ, գաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսսեայ, տաճար լուսոյ մայր. առ ծնեալն 'ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ՝ շնորհել զթողութիւն մեր ննջեցեալոցն։

Ցօղ քաղցրածաւալ՝ ցանկալի զուարթնոցն, նիւթեղէն սրովբէ, գեղ մարգարտափայլ, հիմն եկեղեցւոյ. մաքուր աղաւնի՝ ամպ հովանաւոր՝ սուրբ կոյս Մարիամ, առ ծնեալն 'ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ՝ շնորհել զթողութիւն մեր ննջեցեալոցն։

Մեզ բարեխօս՝ մեղաց քաւարան, դուռն կենաց և արքայութեան, մայր գթութեան և ողորմութեան։

Մայր սուրբ. (Տես յէջ 14.)

Մաղթանք առ Ծնօղ Յիսուսի փրկչին.

Մայր խաչեցելոյն, գթա՛ 'ի մեզ։
Մայր ցաւագին, գթա՛ 'ի մեզ։
Մայր Յիսուսի, գթա։
Մայր փրկչին, գթա։
Մայր կենաց, գթա։
Խորհուրդ կենաց, գթա։
Աղբիւր կենաց, գթա։
Դուռն կենաց, գթա։
Մայր կենդանութեան, գթա։
Մայր փրկութեան, գթա։
Գրաւական կենաց մարդկան, գթա։
Նոր բուրաստան, գթա։
Ծաղկեալ շուշան, գթա։

Վարդ կարմրերփեան , դրամ :
Լեառն զմռսեայ , դրամ :
Բլուր կնդրկի , դրամ :
Խորան սրբութեան , դրամ :
Սիրոյ սեղան , դրամ :
Ողջակէզ սիրոյ , դրամ :
Մաքուր պատարագ , դրամ :
Հաճոյական նուէր , դրամ :
Խաչակից Միածնին , դրամ :
Կցորդակից որդւոյն , դրամ :
Հաշտարար խռովելոց , դրամ :
Խաղաղարար տիեզերաց , դրամ :
Քաւարան մեղաց , դրամ :
Դեղ կենաց , դրամ :
Մեռելոց կեանք , դրամ :
Կենդանեաց ջանք , դրամ :
Մայր կենդանեաց , դրամ :
Կենաց ապաւէն , դրամ :
Բարեխօս համայն աշխարհի , դրամ :
Ուրախութիւն տրտմեցելոց , դրամ :
Ուրախարար վերին քաղաքի , դրամ :

Աղաչիւղութիւն առ Մայր Յիսուսի.

Առ քեզ ապաւինիմք սուրբ Աստուածածին, բարեխօսեա անդադար առ որդիդ քո և Աստուածմեր փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

Ի քեզ եմք ապաւինեալ ամենօրհնեալ սրբուհի՝ լեր բարեխօս անդադար վասն մերոյ փրկութեան:

Սկիզբն և պատճառ փրկութեան մերոյ աշխարհի՝ ամենօրհնեալ Աստուածածին, բարեխօսեա՛ առ հայր և որդի, և առ սուրբ հոգին՝ յաւուրն ահաւոր և երեւելի, աղաչեմք:

Աշխարհս է ծով՝ և ես ծփիմ, նաւաբեկեալ՝ ես ընկղմիմ. ինձ ձեռն տուր՝ հան 'ի ծովէս, զի մի՛ անյոյս կորնչիմ կոյս:

Այլ բեկեալ սրտիւ՝ մատանց տատանմամբ՝ յոյս առեալ դարձի, զդէմս 'ի յերկիր եդեալ պաղատիմ մօրդ Յիսուսի. բարեխօսեա մաղթեա քաւութիւն ինձ մեղաւորի՝ դու զօրաւոր փրկանակ կենաց՝ խաչուհի երկնի. քեզ օրհնութիւնք ձայնից՝ և բուրմունք խնկոց 'ի յերկրի, և անուշից իւղոց մատուցումքն յամենայնի։

ՇԱԲԱԹ

ՍՏՈՐՈԳԵԼԻՔ ԱՒՈՒՐՍ

Իսկոյնի երկնայինք կենդանեաց գաւառին, արքոց թագոյնի, մեղուաւորաց յոյս ապաւինի.

ԱՌԱՒՕՏԻՆ

Քարոզ.

Այսօր Ճգնութեամբ սրբոցն զուարճանայ եկեղեցի ուրախութեամբ մեծաւ՝ հանդերձ որդւովք իւրովք տօնելով զյիշատակ սոցա. այլ յիշատակ գովութեան պաշտելի անուան սուրբ Աստուածամօր տիրածին կուսի՝ ընդ սուրբ միածնին երկրպագեացի. որ զամենեսին զսրբոցն պարս ունի հաւաքեալ ընդ

թեւոք իւրովք իբր զմայր երանեալ ամենայն կենդանեաց՝ տիրուհին և Աստուածածին։

Արդ՝ եկայք հաւատացեալք վերապատուեսցուք զգերագոյն և ըզհրաշափառագոյն կոյս՝ զամենագովելին և զամենասրբուհին Մարիամ, զանձառելի լուսոյ մայր, զանհաս անօրէնութեան մայր, և զբոլորից փրկութեան մայր. զ'ի կուսական դասակցութեանց և 'ի սրբոց ճգնաւորաց փառաբանեալ սրբուհին, զ'ի դասուց մարգարէից և յերջանիկ առաքելոց օրհնաբանեալ տիրուհին, զ'ի ժողովոց մարտիրոսաց և 'ի զօրաց հոգեղինաց երգաբանեալ իսկուհին, զերկնի և երկրի արքայուհին։

Աղօթք.

Երեքսրբեան տէրութիւն՝ միասնական աստուածութիւն բնակեալդ 'ի լոյս անմատոյց, կարդամք առ

քեզ տէր, առաւօտու աղօթք մեր հաճոյացին քեզ՝ բարեխօսու-թեամբ սուրբ Աստուածածնի և ա-մենայն սրբոց, որք յաւիտենից քեզ հաճոյացան :

Որ ողորմածդ էս՝ գթած և էր-կայնամիտ տէր, ընկալ զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Ա-ստուածածնի :

Ի սրբութեան քում բարեբա-նեմք զքեզ՝ աղաչանօք սուրբ Ա-ստուածածնին՝ փառաց արժանի ա-ստ զծնեալս աւազանաւն՝ երկնային քո ժառանգութեան :

Աղաչանօք Աստուածածնին ան-ապական քում ծնողին՝ զիմանալի աչս սրտից մերոց բացցես ողորմու-թեամբ հայել'ի լոյս քո Քրիստոս :

Օրհնութիւն Կուսին .

Ուրախ լեր Աստուածածին՝ յոյս և փրկութեան մայր, զքեզ ընդու-նող լուսոյ մեծացուցանեմք :

Զքեզ Աստուածածին աղբիւր անապառ լուսոյն՝ որ լուսաւորէ ըզհաւատացեալս, միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք։

Խնդա՛ և ուրախ լեր յարկ անճառ ծնեալոյդ 'ի քէն անեղդ Աստուծոյ. որ 'ի նմին յորդւոյն քո խնամոց հրաշազարդ փառաւք ամբարձար 'ի կատար աւարտման վերնայինն երկնի լուսապէս. և թեւաւք թեթեւութեան հոգւոյն սլացեալ՝ յիմանալին վերաչուեցեր 'ի կայանս հանգչիլ. ուստի և զանհասանելին իշխանական իմացման՝ զանկապտելին զգայութեան սրտի նկատման՝ զվայելս անտեսից անձնապէս հոգիագրկեալ, զանեղծին փառաց Ճոխութիւն քեզ սեպհականեցեր սուրբ Աստուածածին։

Ձորեքկերպեան աթոռ յօրինեալ՝ անմահ արքային, 'ի լուսոյ կազմեալ, մարգարտաշար ակամբք զարդարեալ, և երփնագոյն լուսովք լցեալ. երկնից երանեալ և փառա-

ւորեալ, սուրբ կոյս Մարիամ պարծանք մեզ յայտնեալ. Աստուածածին սուրբ խոստովանեալ, 'ի քրիստոնէից գոս երկրպագեալ:

Մեծացուցէ. (Տես յէջ 5.)

Աղերս առ Տիրուհին մեր.

Թագաւորին մայր՝ թագուհի փառաց, շնորհաց օթեւան Մարիամ, շնորհօք զմեզ քաւեա տիրամայր:

Թագ արքայական՝ պատկ պանծալի, զքեզ պատկողին՝ աստուածորդւոյն սուրբ թագաւորին, մաղթեա տիրամայր աղերս մաղթելի:

Պաղատանօք անձամբ ցաւագին՝ զքեզ աղաչեմք դշխոյ երկնային. երկրպագեմք քեզ արտասուագին, բարեխօսեա քո սուրբ միածնին:

Աղերս մաղթանաց ընդ փրկութեան մերոյ՝ ամրկ առաջի միածնին՝ ողորմածին ծնող: Օժանդակեա

թեւոցդ աղօթիւք և ելից մերոց 'ի յերկրէս հովտէ։ Թերեւս 'ի ձեռն զօրեղ քոյին հայցուածոց լիցի մեզ անդատապարտ համարձակութիւն յատենի մեծ և ահաւոր սուրբ դատաւորին։

Սիրոյ անմահ փեսային եղեր դուստր Մարիամ, բարեխօսեա վասն մեր 'ի յայնմ աւուր ահեղին։

Մարիամ կոյս անարատ զանազանական փեսայդ աղաչեա, զի հաշտեսցի ընդ այրի եղեալ հոգիս, և միաւորեսցի դարձեալ սիրով ընդ հեռացեալսն 'ի նմանէ։

Սուրբ զԱստուած". (Տես յէջ 7.)

Ընկալ տէր։ Հայր մեր։ Ողջոյն։

ԵՐԵԿՈՅԻՆ

Քարոզ.

Արդ՝ եկայք հաւատացեալք Քրիստոսի, մատիցուք առաջի աթոռոյ շնորհաց նորա՝ աստուածամօր

կուսի, անկեալ արտասուօք առ ոտս տիրուհւոյն մերոյ, և ապաւի-նեալ ընդ հովանեաւ թեւոց նորա, որ է մեր յոյս և ապաւէն, պաշտ-պան փրկութեան, և խաբիսխ հաս-տատութեան, մայր գթութեան և ողորմութեան։

Զանձինս մեր և զմիմեանս տեառն և տիրուհւոյ բոլորով սրտիւ յանձն արասցուք, խնդրելով զողորմու-թիւն՝ յամենողորմ տեառնէ և 'ի գորովագութ տիրամօրէն, 'ի յա-ղութեան երեկոյիս։

Ընդ խնկաբեր սուրբ կանանցն անմահ բուրմանն անուշից՝ խունկս աղօթից մատուսցուք, մաքրել զմեզ 'ի մեղաց։

Աղօթք.

Զերեկոյի աղօթս մեր ընկալ տէր բարեխօսութեամբ ծնողի քո, և ա-ռաքեա 'ի մեզ տէր զօգնութիւն 'ի լեռնէ սրբոյ քումմէ։

Ըստ քաղցրագոյն աստուածային քո հրամանի կոչման՝ որդի Աստուծոյ, եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխատեալք և ծանրաբեռնեալք. թեթեւացո 'ի ծանրութեանց մեղաց զանձինս, և զօրացո բառնալ կամաւ զքաղցր լուծ քոց պատուիրանաց, աղաչանօք սուրբ Աստուածածնին և ամենայն արդարոց:

Տուր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման 'ի խորութեան դիշերիս՝ բարեխօսութեամբ հայցուածոց սրբոյ Աստուածածնին և ամենայն ընտրելոց:

Վասն որոյ և մեք հաւատացեալքս քեզ երկրպագեմք Քրիստոս, և արտասուօք հայցեմք 'ի քէն, բարեխօսութեամբ Աստուածածնին զաստուածային լոյս քո ծագեա յանձինս մեր. օրհնեմք զքեզ 'ի յարութեան երեկոյիս՝ ահաւոր թագաւոր:

Օրհնութիւն Կուսին .

Ուրախացիր Աստուածածին՝ որ կուսութեանց էս պարծանք , և մայր հաստատութեան մարդկան , օգնական և շնորհ աշխարհի , Մաքիամ՝ մայր և աղախին փրկչին մերոյ :

Ուրախ լեր աթոռ փրկութեան , յոյս հաստատութեան մարդկան . միջնորդ օրինաց և շնորհաց , օրհնութեամբ անդադար գոհութեամբ մեծացուցանեմք :

Գովեալ անարատ՝ տիրամայր Աստուածածին , խարիսխ յուսոյ հաստատութեան , յոյս և փրկութեան մայր , կոյս օրհնեալ ես յաւիտեան :

Բարեխօս բարի՝ համայն աշխարհի՝ մայր տեառն Յիսուսի , հօրն երկնաւորի՝ որդւոյն միածնի՝ և փառաց փեսայի , քեզ օրհնութիւն մայր տեառն :

Աղերս առ ողորմածին Ծնող.

Անկանիմք առաջի քո Աստուածածին, և աղաչեմք զանարատ ըղկոյսդ. բարեխօսեա վասն անձանց մերոց, և աղաչեա զմիածին որդիդ, փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

Զքեզ աղաչեմք հանապազ սուրբ Աստուածածին. արբուհի զքեզ աղաչեմք անդադար ձայնիւ. խնդրեմք 'ի քէն անդադար բարեխօսեա:

Աղբիւր կենաց ընկալեալ յեղեմայ սուրբ Աստուածածին. որով արբեցաւ երկիր ծարաւուտ հոգւոյն ի մատուիք. տալ մեզ մաղթեա աղբիւրս արտասուաց՝ մաքրել զմեզ 'ի մեղաց մերոց:

Ողորմագին ձայնիւ գոչեմ, պաղատելով ես աղերսեմ. անկեալ առաս աղաչեմ, նպաստ գերուոյս 'ի քէն խնդրեմ:

Մոլորեալ թափառիմ՝ յորսողէն տագնապիմ, բարեխօս զքեզ ունիմ՝ կոյս մաքուր յաղագս իմ։

Ոտին յոյժ ջարաթոյն, սպասէ միշտ իմ հոգւոյն. կարեվէր խոց զնոյն, ողորմեա անկեալոյն։

Ոահ ուղիղ հոգւոց մերոց 'ի յերկնային ժառանգութիւնն՝ մայր լուսոյ, լուր պաղատանաց յուսացեալոցս 'ի քեզ, և լեր բարեխօս ապաւինեալոցս 'ի քեզ։

Վասն որոյ աղաչեա մայր Աստուծոյ Մարիամ զմիածին քո զորդին, զի շնորհեսցէ ըստ աւաղակին՝ ժառանգել վերատին մեզ զդրախտին վայելչութիւն։

Մայր սուրբ. (Տես յէջ 14.)

Ներբող ամենօրհնեալ Աստուածածնի՝ փառաց դշխոյի.

Տիրածին դշխոյ՝ հարան և թագուհի, Ճշմարիտ պատկեր հօրն երկնաւորի. գեղով հրաշալարդ՝

փայլեալ Յիսուսի, սուրբ կոյս Մարիամ մայր Մանուէլի. եդեմ շընչաւոր՝ երկինք լուսալի, հոգւով գծագրեալ տախտակ կենդանի. շառաւիղ լուսոյ անշինջանելի, և անկիզական վառեալ մորենի։

Աննիրհելի դիտմամբ՝ լուսալիր աչօք՝ նկատեալ տեսակ. կտակ մակագիծ՝ անեղծ պայմանաւ արձան հաստատեալ։ Սահման յարակայ՝ մեծութեանն կցորդութեան. մասնակից շնորհընկալ՝ հայրական գըթութեան։ Վեհին պատկեր՝ կերպիւ կշռորդեալ. կնիք մատանւոյ՝ տերամբ կերպագրեալ։

Հարան պանծալի՝ 'ի բիւրուց ընտրեալ, և 'ի մայրութիւն՝ վեհին հրաւիրեալ. իսկուհի երկնի՝ յերկնայնոց պատուեալ, դշխոյ աշխարհի՝ յորդւոյն մեծարեալ. մարգարտատեսիլ ծիրանազգեստեալ, և հիմն հաւատոյ անշարժ կառուցեալ։

Երկին լուսեղէն՝ զարդարեալ

վրկչէն, էական բանին օթարան՝ Մարիամ, ընտրեալդ 'ի բիւրէն։

Իւսակ հոգեւոր եօթնարփին ընորհաց, փունջ վարդից յեռեալ անուշահոտ հոգւով. նոր բուրատան ծաղկաք զարդարեալ, վարդն Քրիստոս 'ի քէն վառվառեալ։

Բուրումն անուշից՝ բուրվառ խնկալի, կնդրուկ և հալուէ Մարիամ, խնկաբեր հովիտ։

Տուփ ես խնկալի՝ ծաղիկ զուարճալի. այն հոտն որ 'ի քէն բուրեաց՝ զհոգիս վառէ տիրամայր։

Ո՞վ բանիւ բովանդակէ՝ զքո մեծութիւնդ մեծարել, տիրամայր. երրորդութեամբն եղեր զարդարեալ, յիմանալի զօրացն երանեալ։ Արդ մեք հողոյ ծնունդքս մեղուցեալ, երկրպագեմք մօրդ ատուածարեալ. զքեզ աղաչեմք սուրբ կոյսդ բերկրեալ, բարեխօսեա որդւոյդ մարմնացեալ։

Լուսատեսիլ մայր և կոյս, խաւարելոց ես դու լոյս. մեղաւորաց

դարձ և յոյս, օրհնեալ պտուղ քո Յիսուս։

Արդ՝ ամենեցուն վերակարդելոց թուոցս այսոցիկ՝ բնակարան բաղձալի և երանելի, և ընդունարան կամաց անբաւին՝ զքեզ խոստովանիմք երկրաւոր ծնունդքս սարաստեղծականն Ադամայ, որոց անհամար և անթիւ ազանց՝ ամրական և պահպանական պարիսպ կառուցար։ Քանզի յարժանահայց և յամենազօր քո բարեխօսութիւնդ միշտ ապաւինեալ՝ մնամք 'ի հաստատութեան, խնամեալք և հանգուցեալք ընդ հովանեաւ պաշտպանութեան ամուր պատուարի սուրբ Աստուածածնիդ. որ եղեր մեր օգնական և առն ապաւինի յուղխից հեղեղաց յաւուր անձկութեան. մեզ բարեխօս՝ մեղաց քաւարան, դուռն կենաց և արքայութեան, մայր գթութեան և ողորմութեան։

Մաղթանք առ Մայրն ողորմութեան.

Տիրամայր Աստուածածին. մայր
սուրբ բարեխօսեա։
Դշխոյ վեհափառ, մայր։
Իսկուհի երկնի, մայր։
Տիրուհի օրհնեալ, մայր։
Մարիամ շնորհալից. մայր։
Կոյս անարատ և անբիծ, մայր։
Կոյս բարեշնորհ, մայր։
Պատկ կուսութեան, մայր։
Պատկ երանութեան, մայր։
Համասփիւռ ծաղիկ, մայր։
Շուշան լուսաւոր, մայր։
Լոյս գերազանց, մայր։
Լոյս կենդանի, մայր։
Լոյս իմանալի, մայր։
Օթեւան սուրբ երրորդութեան,
բարեխօսեա՛ կեցուցանել զմեզ։
Որդւոյն ծնող, բարե։
Հոգւոյն վերընդունող, բարե։

Երրորդութեան փառացն տա-
ղող, բարե։
Հայելի մաքուր, մայր սուրբ բարե։
Ջահ երկնային, մայր։
Նշոյլ փրկական, մայր։
Աթոռ Աստուծոյ բանին, մայր։
Աթոռ փրկութեան, մայր։
Մինչնորդ հաշտութեան, մայր։
Խաղաղութեան ձայնատու, մայր։
Մայր գորովական, մայր։
Խնամակալ բարեխօս, մայր։
Վահան հաւատոյ, մայր։
Նեցուկ յուսոյ, մայր։
Արմատ սիրոյ, մայր։
Պարծանք եկեղեցւոյ, մայր։
Կուսանաց պարծանք, մայր։
Վկայից պսակ, մայր։
Առաքելոց տիրուհի, մայր։
Մարգարէից տեսչուհի, մայր։
Նահատակաց ծաղիկ օրհնու-
թեան, մայր։
Երկնաւորաց ցնծութիւն, մայր։
Երկրաւորաց բերկրութիւն, մայր։
Մեղաւորաց յոյս, մայր։

Անդրդուելի աշտարակ, մայր։
Անպարտելի պարիսպ, մայր։
Ականակիտ վտակ, մայր։
Աղբիւր յորդառատ, մայր։
Աղբիւր ծարաւեաց, մայր։
Բաշխող բարութեանց, մայր։
Հանդիսատ աշխատելոց, մայր։
Մխիթար նեղելոց, մայր։
Ապաւէն մեր և յոյս, մայր։
Օթեւան սուրբ երրորդութեան,
բարեխօսեա կեցուցանել զմեզ։
Որդւոյն ծնող, բարե։
Հոգւոյն վերընդունող, բարե։
Երրորդութեան փառացն տա-
րող, բարե։

Ապաշխարութիւն յոտս սուրբ Աստուածածնի.

Առ քեզ ապաւինիմք ամենասրբուհի, գերագոյն և հրաշալի, և բաշխող բարութեանց. աղբիւր ես ծարաւեաց, և հանդիսատ աշխատե-

լոց, և եղեր վերընկալ աստուածային բանին։

Աստուածածին ապաւէն մեր և յոյս՝ բարեխօսեա առ որդիդ քո միածին, զի փրկեսցէ զմեզ 'ի հրոյն տանջանաց, և պարգեւեսցէ մեզ զերկնից արքայութիւնն։

Ի քեզ եմք ապաւինեալ Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ. մի դադարիր վասն մեր բարեխօսել օրհնեալդ 'ի կանայս։

Ի քեզ եմք ապաւինեալ, որ մայրդ ես և աղախին Քրիստոսի. լեր բարեխօս վասն մեր. զի զանուն տեառն կարդասցուք, և զքեզ մեծարեալ պատուեսցուք։

Զքեզ յաւէտ օրհնութեամբ միշտ պատկեմք՝ 'ի նուիրեալ տեղիս արքութեան քումմ տաճարի. և 'ի թեւս պահպանութեան լայնատարած քումդ մաղթանաց ապաւինելով զձեռս մեր 'ի սմա տարածեմք, և աներկբայ յուսով հաւատամք ապրիլ։

Ի բարեխօսութիւն փութացիր մեզ սուրբ Աստուածածին՝ առ 'ի փրկել զժողովուրդս 'ի մեղաց և յապականութենէ :

Փութացիր յօգնութիւն սուրբ Աստուածածին , և աղաչեա զառ 'ի քէն զմարմնացեալ բանն Աստուած , զի յահաւոր և 'ի միւսանգամ գալըստեան իւրոյ պարգեւեսցէ մեզ զկեանսն յաւիտենից :

ԿՅՈՐԴ ԱՌԱՒՕՏԵԱՆ

ԶԿՆԻ ԱՒՈՒՐ ԱՒՈՒՐ ՊԱՀՏԱՄԱՆ

Գանձ պատուական կաթողիկէ եկեղեցւոյ՝ յայտնեալ սուրբ Աստուածածին, որով Ճոխացան հարստունք երկնաւորք և օրհորդք ըղձաւորք։ Գանձ կենաց աստուածային, ակն պատուական յաշխարհիս ծովէ ընտրութեան, որ զաստուածային հրոյն տարար կերպարան։ Ջահ լուսոյ՝ մայր կենսատուին, կենդանարար սուրբ Աստուածածին, և կենդանահոս աղբիւր լուսածին։ Ահա ընկալցիս զաղերս աղօթից յարմարեալ խնկօք՝ ով տուփ խնկալի և վառարան բոլբոքման անշէջ կայծական, աղաչեմք։

Գտեալ ակն պատուական մարգարտի՝ անՃառ ներգործութեամբ

յաշխարհիս ծովու, Մարիամ սուրբ Աստուածածին։ Դուստր լուսոյ և Մայր սիրելի. անձեռագործ հիման հաստատոյ սուրբ եկեղեցւոյ Ճշմարիտ պատկեր. որոյ այսր օրինակի անուամբ օծեալ կնքեցար՝ հարանարան միոյ բանին մարմնացելոյդ 'ի քէն Աստուծոյ։ Ահա ընկալցիս զաղերս աղօթից յարմարեալ խնկօք՝ յայս յարկ նուիրեալ սուրբ եկեղեցի, աղաչեմք։

Ակն լուսատու՝ լուսոյ Ճեմարան, պատկ պարծանաց՝ թագ վայելչութեան. սուրբ կոյս Մարիամ՝ ծաղիկ անթառամ, շուշան գեղեցիկ՝ պտուղ աննման. մաքուր աղաւնի՝ տատրակ միական, արուքէ հոլեղէն՝ փառք ազգի մարդկան։ Օրհորդ անեպատ՝ և հարսն անարատ, տիպարդ հրաշազարդ՝ մայր երանութեան։ Երկնից թագուհի՝ դշխոյ աշխարհի, մայր անդրանկին՝ և դու անդրանիկ։ Աղաչեա զորդին՝ զքոյդ միածին, տալ խաղաղութիւն երկրի՝ երկնային, աղաչեմք։

Առ քեզ պաղատիմք մայրդ Աստուածածին, ծնող արժանաւոր կենդանի բանին. քեզ երկրպագեմք և քեզ երանեմք, որ մեծարեցար դշխոյ ահագին. քրովբէ մարմնային՝ քնարդ երկնային՝ քաւիչդ Եւային, սուրբ կոյս տիրածին, ծնող անեղին, մայր անձառ բանին: Հարան հրեղինին, փառք Իսրայելին, վայելք հեթանոսին: Պսակ Մկրտչին, թագ Ստեփանոսին, լոյս Լուսաւորչին: Ազգաց երկրածին՝ որ զքեզ դաւանին՝ տուր խաղաղութիւն, բարեաց լիութիւն, և առողջութիւն, մեղաց թողութիւն, ապաչեմք:

Բարեխօս ընդ քեզ ընկալցիս առ 'ի հաշտութիւն պարտաւորելոցս՝ զշառաւիղն անմահից կենաց՝ զկարապետն կոչման արքոց, և զպսակն մարտիրոսաց, առաքելովք և մարգարէիւք. և որ մեզն է լուսաւորիչ, հանդերձ միանձամբք ճգնաւորօք, և ամենայն ընտրելոցն

դասուք . մեզ բարեխօս՝ մեղաց քա-
ւարան , դուռն կենաց և արքայու-
թեան , մայր դթութեան և ողոր-
մութեան , աղաչեմք :

Սուրբ կոյս տիրամայր՝ միածնիդ
անհայր՝ լեր ինձ միսիթար . սրբուհի
պայծառ՝ մաղթեա առ Յիսուս՝
փրկիչ բարերար . Միածինն հօր՝ և
քեզ անդրանիկ , որդի քո ծնընդ-
եամբ՝ և տէր արարչութեամբ :
Ընկալ զմաղթանս այսր աղերսա-
նաց քումմ դաւանողիս , և մատո
ընծայեա ընդ սմին խառնեալ ըզ-
բանն իմ՝ նախնի՝ մեծիդ ներբողի՝
'ի քոյդ պաղատանս : Հիւսեա միա-
ցո զմեղուցելոյս դառն հեծութիւն
ընդ քումդ երջանիկ և խնկաւո-
րեալ հայցուածոց՝ տունկդ կենաց
պտղոյն օրհնութեան . զի 'ի քէն
միշտ օգնեալ և բարեգործեալ , և 'ի
մաքրական քո ծնելութիւնդ ա-
պաւինեալ և լուսաւորեալ , կեցիցս
Քրիստոսի որդւոյ քոյ և տեառն :

ԿՑՈՐԴ ԵՐԵԿՈՅԻՆ

ԶԿՆԻ ԱՒՈՒՐ ԱՒՈՒՐ ԿՈՒՍԻՆ ՊԱՀՑԱՄԱՆ

Ընդ Աստուածածնին մաղթանաց՝ ահա և զվերնոցն անմահ հրեշտակացն լուսակերպից զաղերս հայցուածոց, որ վասն իմ գոչեն առանց լռելոյ՝ հանապազորդեան արգահատութեամբ մաքուր բերանոց, ընկալ բարեգութ։ Որ գեղեցին հանապազ առ մեզ՝ ընդ մերում կրկնս կարեկցելով, բարեմասնութեանն մեր սպասեն, և յաւիտենականն կենդանութեամբ փրկութեանն մեր աղօթեն՝ զայս բան ասելով. զգործս ձեռաց քո մի անտես առներ. ողորմեա, գու ստեղծեր՝ մի կորուսաներ։

Որովք և ինձ մեղաւորիս հողեղինի մարդասիրեացես ողորմել Յի-

սուս, աղաչանօք իմոյն հրեշտակի, դարձուցանելով զիս տէր 'ի բարիդ քո հետս լուսոյ. զի զաւանդ հոգ-ւոյս իմ պաշտպանութեան՝ զոր հաւատացեր նմին տեսչութեան, զընկալեալն 'ի քէն 'ի կենցաղ աս-տեացս՝ ուրախութեամբ սրտիւ յիս բերկրեալ, անմեղադրելի առ 'ի քէն օրհնեալ՝ խնդալից դիմաց զուարճութեամբ՝ քեզ արքայ բար-ձրութեան փառաց անհասից՝ 'ի խրախճանս կենդանախումբս բեր-կրեցելոցն պարուց մատուցեալ ըն-ծայեցուսցէ՝ գովեալ ողորմած։

Վասն առաքելոցն սրբոց՝ յեր-կնատեղծ քո ձեռացդ ձեռնադրե-լոց, և հոգւովդ սրբով օծելոց, և ինձ ողորմեացիս յիշատակաւ սիրոյ նոցին ընտրութեան։ Շաւիղ ինձ եղիցի նոքօք՝ և հանդերձեացեն՝ յե-ղանութիւնն փափաքելի. ձայն բա-ղի հովուութեան նոցին՝ 'ի յողջոյն ինձ կենաց քաղցր լուիցի։ Վասն կալայց 'ի յանեղծութիւն փրկու-

թեան տունեցեալ յուսոյն՝ ընդ ա-
ռաջնորդացն կենաց, սկզբնաշնոր-
հիցն պատուոյս, փառաւորեալն
դասուց, գեղոցն բանականաց, ա-
ւետարանչացն բարձանց, իշխա-
նացն պանծալեաց, լուսապայծառ
թագիւ պճնելոցն, 'ի զարդ անկա-
պուտ զօրութեան շնորհին պայծա-
ռացելոց, իւղովն զուարթութեան
տիրական լուսոյն կատարելոց։

Ընդ աշակերտաց մեծիդ հրամա-
նի բարձրեալդ Աստուծոյ Քրիս-
տոսի՝ և մարտիրոսացն ընտրելոց
նահատակութեամբ. որք մահացու
և վշտաբերչարն մարմնով՝ վտանգա-
ւոր և ամենակիրն անդամոք, եր-
կրաւորական և հողազանգուածն
բնութեամբ՝ մարտուցեալ ընդ
տարր դոյից ամենայն նիւթից՝ պատ-
կեցան, բարձրացան և կենդանա-
ցան հոգեպէս։ Որոց հաճոյական
և ընդունական մաղթանօք, արիւն-
ընծայ՝ վաստականուէր՝ քրտնակըն-
դրուկ աղերսիցն յարդմամբ՝ ընկալ

զնա նորոգ ըստ նոցին մասին անեղծ փրկութեամբ 'ի քեզ արձանացեալ։

Ընդ խաղացեալսն հուրբ և սուսերբ՝ արեամբ ներկեալոցն, և ճրագնաւորացն արբոց՝ հարցն միանձանց՝ և քեզ հետեւեալոցն որդի Աստուծոյ. որք անպարտելի քաջութեամբ և անպատիր զգաստութեամբ՝ ընդ դժնեայ գոռոզի մարմնոյս բռնութեան արիապէս մարտուցեալ, սովիմբ վանեցին զանմարմինն բելիար. և մշտամարտ հանդիսիւ՝ յասպարիսի կենցաղոյս՝ զթագն յաղթութեան համարձակապէս՝ պայծառ ճոխութեամբ պճնեալ խիզապէս՝ 'ի գլուխս կապեցին. վասն նոցին արժանաւոր մաղթանաց և նուիրական հայցուածոց՝ և զնա զմեղաւորս 'ի պատժականաց ընկալ ընդ նոսին։

Եւ ահա խառնեալ զանմաքուրս բան ընդ նախագրեալ երջանկացն փառատրական աղերսարկութիւն, որ վասն իմ գոչեն քեզ 'ի հաճու-

թիւն , և էս ընդ նոսին՝ իբր դառ-
նութիւն եդեալ ընդ քաղցու , կամ
սատակ ընդ ողորկութեան , տգե-
ղութիւն ընդ վայելչութեան , և
սիղմ ընդ գեղեցկութեան մար-
գարտի , կամ հող ընդ յատակու-
թեան ոսկւոյ , և կամ քարինս ա-
նարգս ընդ պայծառութեան ար-
ծաթոյ , բացասութիւն ընդ ճշմար-
տութեան , կամ աւազ ինչ ատա-
ճնառու ընդ կակղութեան զան-
գուածոյ հացի : Արդ լուր հզօր ,
հնարաւոր , գովեալ , զնոցայն վան
իմ , և զնմա ընդ նոսին՝ 'ի նոցին գո-
վեսա , 'ի փրկութիւն իմ , և 'ի փառս
քո , ամենագութ , բարերար , օրհ-
նեալ , երկայնամիտ , կարօղ , անքըն-
նին , անճառ , անեղծ և անսաեղծ :
Քո են պարգեւք , քո են շնորհք .
դու սկիզբն և պատճառ բարեաց
ամենայնի :

Բարձ զմեղս իմ հզօր . լոյծ զա-
նէծս իմ՝ օրհնեալ . քաւեա զպար-
տիս իմ՝ ողորմած . ջնջեա զյան-

ցանս իմ գթած. մատո մատն այ-
ցելութեան. և անդատին իսկ կա-
տարեցայց. զինչ քեզ տէր քան
զսոսին դիւրագոյն, և կամ զինչ
ինձ պարտաւորիս կարեւորագոյն։

Մի՛ ածեր ողորմած ինձ օր տա-
րաժամ 'ի համառօտս երբի՝ անթո-
չակ ապաձեռնութեամբ ընդ ան-
կատար ուղին հետեւել. և մին իբր
յանկարծագէպ հինից տապատակ՝
գիշեր մահուն ինձ պատահեսցէ։
Մի՛ հանգիստն մահ բերիցէ, և մի
ննջումն 'ի տատակումն յառաջես-
ցէ. մի՛ քունն ինձ կորուստ լիցի, և
մի նիրհումն ապականութիւն գոր-
ծեսցէ. մի՛ վախճանն անյարմար 'ի
վերայ իմ արշաւեսցէ, և մի շնչոյս
վերարձակութիւն ըմբռնեալ՝ 'ի խա-
նարհ լքցի։

Դու ես տէր, դու գթած, դու
բարերար, դու երկայնամիտ, դու
ամենակարող. առ ամենայն բան
անհատութեան անձառ զօրաւոր,
քաւեալ՝ փրկեալ՝ կենագործեալ՝ ու-

սաւորել, վերստին հաստատել, 'ի ժանեաց կերչաց դազանաց և կամ յատամանց վիշապաց 'ի կեանս կորզել. 'ի խորոց անդնդոց 'ի լոյս քերկրութեան ածել, և 'ի հեղձմանէ ծփանաց մեղաց՝ ընդ արդարս երջանկաց՝ փառաւք բազմեցուցանել։ Ամենայն ոգի քեզ ակնկալեալ յուսով սպասէ՝ կարօտեալ քումդ շնորհաց, եթէ երկնայինք՝ և եթէ երկրաւորք. եթէ անկածն մեղք, և եթէ ամբարձեալն արդարութեամբ. եթէ տէր՝ և եթէ ծառայ. եթէ ախկին՝ և եթէ աղախին. և 'ի ձեռին քո է շունչ կենդանական բոլորեցուն։ Եւ քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ ԱՌ ԱՄԵՆԱՄՈՒՐԲ

ՄԱՅՐՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ աղերս մաղթանաց առ տէրն կոյս Աստուածածին.

Եւ արդ՝ 'ի վերայ այսքանեաց յուսահատութեանց, և ահարկու սրտաբեկութեանց, պակուցանողական սատկութեանց, աստուածային բարկութեանց, տագնապեալ ոգւով թախծութեան խապառ, աղաչեմ զքեզ տէրդ Աստուածածին: Հրեշտակ 'ի մարդկանէ. մարմնատեսիլ քերովբէ. երկնաւոր ալքայուհի. անխառն լեզուաւ զոդ. մաքուր որպէս լոյս. անշաղախ լսատ նմանութեան պատկերի արուսեակին բարձրութեան.

գերազանց քան զբնակութիւն ան-
կոխելին սրբութեանց. երանաւոր
խոստմանն տեղի. եդեմ շնչական.
ծառ կենացն անմահից՝ բոցեղէն
սրոյն պարուսակեալ: Ի բարձրեալն
հօրէ զօրացեալ և հովանացեալ.
հանգստեամբ հոգւոյն հանդեր-
ձեալ և մաքրագործեալ. բնակու-
թեամբ որդւոյն յարդարեալ և
տաղաւարեալ: Միածինն հօր, և
քեզ անդրանիկ. որդի քո ծնն-
դեամբ, և տէր արարչութեամբ:
Ընդ անաղտ մաքրութեանդ՝ և ան-
բիծ բարի. ընդ անարատ սրբու-
թեանդ՝ և խնամակալ բարեխօս:
Ընկալ զմաղթանս այսր աղերսա-
նաց քում դաւանողիս, և մատո՛
ընծայեա ընդ սմին խառնեալ ըզ-
բանն իմ նախնի՝ մեծիդ նեղբողի՝
'ի քոյդ պաղատանս: Հիւսեա՛ միա-
ցո զմեղուցելոյս դառն հեծութիւն
ընդ քումդ երջանիկ և խնկաւո-
ւեալ հայցուածոց, տունկդ կե-
նաց պտղոյն օրհնութեան: Զի 'ի

քէն միշտ օգնեալ և բարեգործեալ, և 'ի մաքրական քո ծնելութիւնդ ապաւինեալ և լուսաւորեալ՝ կեցից Քրիստոսի որդւոյ քոյ և տեառն :

Օժանդակեա թեւոցդ աղօթիւք խոստովանեալ մայրդ կենդանեաց՝ և յելից իմ յերկրէս հովտէ, առանց լկանաց հեառեալ 'ի կեանս օթեւանացդ պատրաստութեան. զի թեթեւացի կատարածն իմ՝ ինձ ծանրացելոյս անօրէնութեամբ : Արասցես ասն ինձ բերկրութեան՝ զօրն իմ տագնապի՝ ողջացուցիչ երկանցն Եւայի : Բարեխօսեա, խնդրեա, աղաչեա. զի ըստ անճառելի մաքրութեանդ՝ և ահա զբանիդ հաւատամ զընդունելութիւն : Արտասուօք օգնեա վառանգեցելոյս՝ դովեալդ 'ի կանայս. ծունր խոնարհեցո առ իմ հաշտութիւն՝ ծնօղդ Աստուծոյ. ընդ իմում թշուառիս հոգա՝ խորան բարձրելոյն. ձեռն տուր անկելոյս՝ տաճար երկնային : Փառաւորեա զորդիդ քո 'ի քեզ՝

աստուածօրէն ինձ հրաշագործել
քաւութիւն և ողորմութիւն. աղախին
ԱՅ և մայր. բարձրացի պատիւ
քո ինեւ, և ցուցցի փրկութիւն իմ
քեւ։ Եթէ զիս գացես ամ՛ուսայր.
թէ ինձ ողորմեացիս՝ ս՛րբուհի. թէ
զկորուսեալս շահեացիս՝ անարատ.
թէ զհարթուցեալս յանձանձեաց-
ցես՝ Է՛րջանիկ. թէ զամաչեցեալս
յառաջ մատուցես՝ բարեշնորհ.
թէ յուսահատելոյս ինձ միջնոր-
դեացես՝ միշտ սուրբ կոյս. թէ ըզ-
մերժեալս ընտանեցուցես՝ մեծա-
լեալդ յԱստուծոյ. թէ յիս ցուց-
ցես զգթածութիւն՝ լուծիչդ անի-
ծից. թէ զծփեալս հաստատեացես՝
հանգիստ. թէ 'ի խռովութեանցս
յուզմանց փոխեացես զիս՝ խաղաղա-
րար. թէ վրիպելոյս ինձ հնարաւո-
րեացես՝ գովեալ. թէ վան իմ
մոցես 'ի հանդէս՝ մահու նահան-
ջիչ. թէ զդառնութիւնս իմ անու-
շեացես՝ քաղցրութիւն. թէ զբա-
ժանմանն իմ խարոց քակտեացես՝

հաշտութիւն . թէ զանմաքրութիւնս իմ բարձցես՝ եղծման ընդառանիչ . թէ զմահանեալս մահու փրկեացես՝ կենդանի լոյս . թէ զլալեացս ձայն հատցես՝ բերկրութիւն . թէ զխորտակեալս կազդուրեացես՝ դեղ կենաց . թէ 'ի կործանեալս յիս ակնարկեացես՝ հոգելից . թէ ողորմութեամբ ինձ պատահեացես՝ կատակ նուիրեալ . օրհնեալդ միայն 'ի շրթունս անբիծս լեզուաց երջանկաց : Ահա կաթիլ զմի կաթին՝ քումդ կուսութեան՝ յանձն իմ անձրեւեալ՝ կենաց ինձ զօրէ . մայրդ բարձրելոյ տեառն Յիսուսի արարչին երկնի , և բնաւին երկրի : Զոր անճառապէս ծնար բովանդակ մարմնովն , և համայն աստուածութեամբն . որ փառաւորեալն է ընդ հօր , և հոգւոյն սրբոյ՝ էութեամբ , և անքննութեամբ մերոյին բնութեամբս միացելով՝ ամենայն և յամենայնում . մի յերրորդութենէն . նմա փառք յաւիտենից յաւիտեանս . ամէն :

Նորին Աղօթք 'ի փոխուելն Կուսին.

Գլխաւորեալ այսօր 'ի քեզ զնմանալեացն փարթամութիւն, որ սլացեալ հասեր 'ի բարձունս երկնից՝ իբր անընդունակ ապականութեան և մահու լուծման, և ցուցար բնակիչ արժանապատիւ կենդանեաց երկրին. սուրբդ տիրամայր, արգահատեա միշտ զողորմութիւն՝ որոց պանդխտիմք 'ի վիհս նեղութեանս։

Ունող հրճուանաց անթիւ խրախութեանց՝ աստուածային անկէտն խոստմանց, 'ի բուրաստանս անդաստանաց տիրական անկոյն. որոյ ստեղունք շառաւիղաց երկրային հնարից դեղրազանց. անդր մուծցես զքո դաւանողքս՝ սուրբ տիրուհի՝ մայրդ Յիսուսի։

Սրբոյն Ներսիսի Լամբրո-
նացւոյ
Աղօթք առ տէրն Աստուածա-
ծինն, 'ի Տօնի Վերափոխման.

Ո՛վ մայր Աստուծոյ Աստուա-
ծածին Մարիամ, հեզ և քաղցրա-
լուր որոց առ քեզն յուսան. ո՛վ
պարծանք կուսից և փառք հրեշ-
տակաց, միայն ես համարձակ բա-
րեխօս աշխարհի. ո՛վ շտեմարան
բարեաց և աղբիւր ողորմութեան՝
որոց հաւատով զսուրբ ոտից քոց
կախեցան: Քեզ ապատէ ժողովեալ
հանդէս, և առաջի անկեալ ըզ-
գթութիւն քո հայցէ: Դու սուրբ
կոյս որ կացեր այսօր հուպ երրորդ-
գութեան, խնդրեա՛ եկեղեցւոյ ըզ-
խաղաղութիւն, և անձանց մերոց
զփրկութիւն: Դու տիրուհի, որ
համարձակդ ես առ միածին քո որ-

դի , աղաչեա՛ վասն արեամբ գնեալս
իւր հօտի , պահել ամբողջ զանդամս
զանազան 'ի լրումն մարմնոյ իւր
հասակի . զայցելուս յառաջնորդել, զքահանայս 'ի քաւել, զպաշտօնեայս յուսուցանել, զժառանգաւորս 'ի դաստիարակութիւն, ըզժողովուրդս՝ ունկնդրութեամբ նոցին հետեւել : Քեզ մաղթէ եկեղեցիս , և անկեալ առաջի աղերսէ . խոնարհեաց , աղաչեա՛ զմիածին որդի քո՝ վասն թագաւորաց հանդարտութեան , իշխանաց զուարթութեան , զինուորաց պատսպարութեան , քաղաքաց պահպանութեան , և որոց 'ի նոսա զանազան հասակաց խնամակալութեան : Որպէս զի միաձայն երգով 'ի մի հանդէս պարու տօնեսցուք քեզ աստ և յանդրանկացդ խորան , 'ի փառս ամենասուրբ երրորդութեանն՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Գրիգորի Վարդապետի Սկևռացւոյ

Աղօթք առ սուրբ Կոյսն, յիշատակաւ տեսօրինակաւնացն Յիսուսի.

Ամենօրհնեալ Աստուածածին՝ տաճար բարձրելոյն. տաղաւար աստուածընկալ, արքայութիւն երկնից, բարձող էիցս բարձողին, բարեխօսեա առ միածին որդիդ քո և Աստուած մեր, վասն յոգնամեղ և բիւրապարտ պատժապարտիս, թողուլ զյանցանս զոր գործեալ եմ, զհոգւոյ և զմարմնոյ և զգայութեանց սորա, ըզմարմնոյ և զգայութեանց իւր, ըզկամայ և զակամայ, զգիտութեան և զանգիտութեան, զոր յաստուածայինս և 'ի մարդկայինս։ Աղերս արկ առաջի հեշտալուր և մարդասէր կամաց գթածի տեառնդ՝ և զառ 'ի քէն գեր 'ի վերոյ քան ըզ-

բան ապաստաւորութիւն տնօրինա-
կան գործոց նորա. և նոքաւ մաղ-
թեա զներրու�տն թուելեաց յան-
ցանաց ամենաթշուառ վարանելոյս:
Վասն զի իմ չքաւորեալ գոլով 'ի
բոլորից արդասեաց բարեմասնու-
թեանց, քոյովդ պաշտպանեսցես
ընծայիւք, ամենօրհնեալ մայր լու-
սոյ, և առագաստ տնօրէնութեան
թագաւորին փառաց: Ո՛ասա՛ նուէր
հաշտութեան զանձառելի խոնարհ-
հութիւն անբաւելի բնութեանն
մինչեւ 'ի քոյդ մաքուր սրտվայն՝
սակս զմեզ արդարացուցանելոյ 'ի
յանիծից յանցաւորութենէն. և
նոքաւ հայցեա՛ զթողութիւն պարտ-
եաց աւազատիպ և լեռնահանգէտ
սխալանաց եղեռնականիս:

Որ կաթնասուն դիեցուցեր տը-
ղայապէս զհին աւուրցն Ասուած,
որ տայ կերակուր ամենայն կենդա-
նեաց, բանայ զձեռն և լցուցանէ,
աղերսեա՛ նմա՝ Է՛լք հացին կենաց,
զողորմութիւնս իմ ըստ իմանալի

հասակին արբուցանել կաթամբ ի-
մասից 'ի սուրանց աստուածային
հանճարոյն. որով հասից յարբունս
հոգեւորական հասակին՝ յայր կա-
տարեալ 'ի չափ հասակի կատար-
ման իւրոյ։ . . .

Եւ որ յանբանից բաղմեցուցեր
մեր զբանն կենաց, զհացն 'ի յեր-
կնից ինչեալ, զկերակուրն ամենայն
աշխարհի, յորմէ որ ուտէ՝ զմահ
ոչ ճաշակեսցէ, մաղթեա՛ նմա մայր
կենաց, զհաւատարեալս անբանից
անասնական ախտակրութեամբ, և
զսովեալս հացին կենաց՝ անառակ
վարուք, կերակրել կենաց հացիւն,
և վերատին փոխել յիմաստ բանա-
կան և 'ի հանճար աստուածային։

Եւ որ զանհպելին Սերովբէից,
յորմէ ահիւ պակուցեալ թեւա-
պարփակ ծածկուութիւ գիմացն 'ի
հրաշեցն անմերձենալի արփւոյն,
'ի գիրկս բարձեալ համարձակա-
պէս, անյաղաբար համբուրէիր
շուրթն 'ի շուրթն մերձեցուցեալ՝

հարան երկնաւոր, հայցեա՛ նմա, զտարամերժեալս անառակ վարուք 'ի հայրենի տանէն, և զվատնողս խոզարած կենաց սեպհական սահ- ցուածոցն, և զդիմեալս վերստին 'ի յարկն հայրենի՝ յամենալի սեղան կենացն հացի, ո՛չ անտես առնել և 'ի բաց մերժել. այլ համբուրի արժանացուցանել, և զլուսեղէնն դարձեալ զգեցուցանել պատմուճան, և աւետարանական կոշկաքն ամրացուցանել, և թագաւորական տպաւն դրոշմել. և զ'ի քէն ծնեալ զուարակն՝ զպարարեալն աստուածուլթեամբն, տալ 'ի զենումն խրախուլթեան մանկանց առագաստին 'ի գիւտ կորուսելոյս։

Եւ որ 'ի քրովբէանման կառագ հողեղէն՝ յաստուածակիր բաղուկ քո բարձեր զհին աւուրցն Աստուած՝ քառանօրեայ մանուկ, ածեալ 'ի տուն հօր՝ յանդիման առնել նմին հանգուստաթիպ պատարագաքն 'ի սրբութիւն ըստ օրինացն ստ-

վորութեան, որ ըստ օրինացն և 'ի վերս քան զօրէնսն գոլով սուրբ և անկարօտ մաքրութեան. զիս՝ որ ընդ օրինօքն և արտաքոյ քան զօրէնսն լի եմ ամենայն պղծութեամբ, պարտեա՛ գերամանքուս սրբարարին ամենայնի՝ մաքրել յամենայն պղծութենէ հոգւոյ և մարմնոյ, և նուիրել ինքեամբ 'ի տաճարն սրբութեան հօրն փառաց։...

Եւ որ 'ի Թեթեւ ամպ ուստգ ըստ տեսանողին բարձեր, որ դնէ յամպս զգնացս և 'ի Թեւս շրջի հողմոց, ինչուցանելով յԵգիպտոս՝ ցողել'ի նմա զանձրեւն կենաց, յորմէ շարժեալ ձեռագործքն կործանէին. հայցեա՛ ամպդ առատաձրնկալ՝ յորմէ բարձեր՝ և յիմս ինչանել խաւարս եգիպտական, և ապառաժուս վայր անպտղութեան, և կործանել յանկումն անկանգնելի զինքնասեղծ ախտիցն կուռս՝ որոմ զոխրականն մատուցանեմ հնազան-

գութիւն . և լուսաւորել 'ի լոյս գի-
տութեան , և ցողով հոգւոյն շնոր-
հի դալարաբեր լինել , քաջածաղիկ
և յոգնապտուղ , անուշահոտ և
քաղցրաճաշակ վարուց առաքինու-
թեանն :

Եւ որ վերատին անդրէն դարձու-
ցեր՝ 'ի լուսն յԵգիպտոսէ զորդին
կոչելոյն , և յերկիրն ածեր աւե-
տեաց , իսկուհի երկնից , մատո՛
պաղատանս բարեբարին , զնատեալս
'ի խաւարի եգիպտական 'ի կաւա-
գործութեան և աղիւսարկութեան
ալրծող մեղաց՝ և դառն ծառայու-
թեան հողեղէն ախտակրութեան
իմանալին Փարաւոնի , հանել որ-
դիութեան կոչմամբ յերկիր աւե-
տեաց աւետարանին պատուիրա-
նաց . որ միշտ բղխէ զպարարտու-
թիւն հոգւոյն շնորհի ընդ քաղ-
ցրութեան սիրոյն աստուածայնոյ՝
'ի կերակուր և 'ի անուշդ իմանալի
և բանական անձին : . . .

Եւ որ յանուանեալ գեօղն Կա-

նա զՀնազանդն քո ըստ օրինաց՝ ա-
ծեր 'ի հարանիսն մարմնական՝ զօ-
րինադիրն, և ծնողական իշխանու-
թեամբ հրաման ետուր սքանչե-
լեաց՝ առնել գինի ուրախարար 'ի
բնութենէ ջրոյ զովարար՝ 'ի խրախ-
ճանս հրճուանաց հարսնարանին
ըստ մանկանց. նոյնպէս և այ-
ժըմ, մայր կենաց, հրամանաւ տի-
րոջապէս և հայցմամբ պաղատանաց
բարեխօսեա առ միածինն քո փե-
սայն եկեղեցւոյ՝ զինչանել խոնարհ-
հութեամբ, ըստ որում է իւր սեպ-
հական, և զաղաղեալ անձն հի-
քոյս բազմօրինակ պոռնկութեամբ՝
մաքրել դարձեալ շնորհիւ՝ որպէս
ծննդեամբ աւազանին, փոխարկե-
լով սքանչելեաք 'ի կուսութիւն
զանմաքրութիւնս. զի բնակցու-
թեամբ սուրբ փեսայիդ՝ ըստ խմաս-
տուն սուրբ կուսանացն արժանա-
ցայց առագաստի լուսոյ վերին
հարսնարանին:

Եւ որ կայիր մերձ առ խաչին՝

չարչարանաց իմ Յիսուսին, և լսէիր զծարաւին բարբառելոյ զքո միածնին. որում զքացախն եւ զուն յարբու�մն և զեղին 'ի Ճաշակումն, որ հեղուսեաք բեւեռեցաւ և տիգաւ կողին խոցեցաւ, և մերկացեալ կայր 'ի խաչին 'ի մէջ երկուց անօրինաց։ . . Իսկ նա 'ի յայսքան տագնապի նախամեծար զքեզ արարեալ, աշակերտին սիրեցելոյ ապաստաւորել հրամանատարեալ. այլեւ ընդ քո անձն անցեալ սուր թերութեան և տրտմութեան. զի թագաւորդ տեսանելոյ ակն ունէիր 'ի ծննդենէ. և արդ մահու գատապարտեալ, տեսեր 'ի խաչին բարձրացեալ։ Վասն որոյ՝ մայր ամենօրհնեալ, զմիածնիդ քո որ վասն մեր կամաւոր խոնարհութիւն, զչարչարանս և զմահ, և զքոյդ որ 'ի ժամուն յայնմիկ զկիրս անբերելի ընութեան մարմնականի՝ ծնողական աղեխարշութեան 'ի վերայ այնպիսւոյ միածնի որդւոյ՝ դեղեցիկ տես-

լեամբ քան զամենայն ոլդւոց մարդ-
կան՝ նախատանաց, չարչարանաց և
մահու . . . զայս ամենայն տեսանե-
լով ծնողական դթով քո տոչո-
ւէիր . զքոյդ ընդ նորայն խառնեալ
կրից, զօրեղ նուէր աղերսանաց ա-
ռաջի արկցես, և մաղթեսցես ըզ-
հաշտութիւն անձնակործան տա-
ղադրելոյս, թողուլ զյանցանսն
գործեցեալ, և պահպանիլ 'ի յա-
պագայն :

Յովհաննու Սարկաւագայ Վար-
դապետի
Բանք մաղթանաց առ տէրբ կոյսն
Մարիամ Աստուածածին .

Մա՛յր Աստուծոյ Մարիամ կոյս
սուրբ, փրկութիւնասէր ամենե-
ցուն, աղաստարար, հաշտեցուցիչ
Աստուծոյ, քաղցր առ ամենայն
մեղաւորս, գթիչ անձանց կորուսեալ-
ոց, քաջայօժար 'ի մաղթանս վասն

կենաց՝ մեռելոց Աստուծոյ, կար-
կառ զամենասուրբ ձեռն քո. ձը-
գեա զիս 'ի փրկութիւն՝ աստուած-
ընկալ խնդրուածովք սրբութեան
քո. 'ի խոշտանկեալ վտանգէ աստի
և 'ի տարակուսանաց զերծո՛ զիս.
քաղցրացո՛ զաղաչանս յականջս
միածնի որդւոյ քո վասն թշուա-
ռական անձին իմոյ. հաշտեցո՛ ըզ-
բարեբար և զմարդասէր հայր նորա
ընդ բարկացուցանողն զնա՝ կորըս-
տական անձին իմոյ. զողորմած և
քաղցր զամենասուրբ հոգի նորա
ցածո՛ 'ի ցասմանէ դառնացուցանո-
ղն զնա վարուց իմոց դժնդակու-
թեամբ և դառնութեամբ. զտո-
ռունս մեղաց իմոց խզեա խնդրուա-
ծովք առաջի աստուածութեան
սրբոյ երրորդութեանն, անցուցա-
նել յինէն զդատաստան մահու յա-
ւիտենականի, զոր եառ ես ինքնին
ձեռնադրել 'ի վերայ իմ:

Աղաչեա՝ սրբուհիդ, լե՛ր ինձ
պատճառ փրկութեան և ազատու-

թեան . տուր ինձ կեանս յԱստուծոյ , զի մի մեռայց , և ննջեցից ըստ մշանջենաւորն մահ և ննջումն . այլ ընդ կենդանեան յաւիտենից՝ Աստուծոյ կենդանւոյ և Աշխարհի ողորմութեամբ անոխակալութեան նորա և գթութեան՝ արժանի եղէց սաղ նմա օրհնութիւն և պատիւ զոր ունին . այժմ և միշտ , և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Յոլհաննու Գառնեցւոյ

Աղօթք առ ամենասուրբ Աստուածածին .

Աստուածածին մայր Քրիստոսի , և ծնող միածնին հօր , բարձող անիծից , և պարծանք ազգի մարդկան , յերկնային զօրացն երանեալ , և 'ի հողեղինաց օրհնաբանեալ . միջնորդ Աստուծոյ և մարդկան , և հաշտարար հօր ընդ արարածս . թագ և պսակ կուսից , և համար-

ձակ բարեխօս մեղաւորաց։ Մեղու-
ցեալս յամենայնի անկանիմ առաջի
քո, և աղաչեմ խբրեւ զնոյն ինքն
զմարմնացեալն 'ի քէն, բարեխօսեա՛
վասն իմ առ բանն Աստուած, զոր
ծնար մարմնով, զոր կեցուցեր՝ ըզ-
կերակրիչն ամենայնի և ամենայն
կենդանեաց։ . . .

Աղաչեմ զքեզ մա՛յր լուսոյ, հայ-
ցեա՛ վասն իմ, դի՛ր աղերս աղաչա-
նաց առաջի Յիսուսի զամենայն
կիրս չարչարանացն իւրոց. զի վասն
իմ կրեաց բարերարն և մարդա-
սէրն։ Յիշեցո՛ սո՛ւրբ կոյս զայսքան
չարչարանքս, զի Թերեւս ողորմեա-
ցի և ներեսցէ բազմամեղիս, և ըն-
ջեսցէ զձեռագիր յանցանաց իմոց.
և իւրով անմեղ մատամբն և սուրբ
արեամբն դրոշմեսցէ զդեղերեալս
'ի դպրութիւն կենացն անվախճա-
նից առ ամենայն սուրբս իւր. զի
ընդ նոսին փառաւորեցից զամենա-
սուրբ զերրորդութիւնն՝ զՀայր և
զորդի և զսուրբ Հոգի, այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Երրորդ այլ Աղօթք.

Երկնային գուռն, և առագաստ անմահ արքային. մայր լուսոյ և կոյս անարատ. որ մարմնով ծնար զբանն Աստուած, և երանեցար յամենայն ազգաց. որ ես պարծանք ազգի մարդկան, և միշտ բարեխօս առ միածինն։ Անկանիմ առաջի քո, և աղաչեմ զքեզ. քո սուրբ կամթամբդ որով անուցեր զանդրանիկ որդին, բարեխօսեա՛ առ նա, զի արքեսցէ զիս 'ի մեղաց, և ազատեսցէ յամենայն սխալանաց։

Բևեռիկ վարդապետի

Աղօթք առ սուրբ Տիրամայրն.

Տէր Աստուած Յիսուս Քրիստոս. վասն ծննդեան ծայրագոյն լուսոյդ, աղատի՛չ աշխարհիս, յամենօրհնեալ կուսէն... վասն ամե-

նամաքուր մարմնոյ և հրաշափառա-
գոյն գրկաց սրբուհւոյն՝ յորում
գգուեցար . վասն աստուածանելոյ
շրթանցն որ համբուրեցար . բազմե-
ղանեան ձեռացն՝ որ շոշափեցար .
երկնաբարձ բազկացն յորում հան-
գեար . անպարիմանալի պարանոցին
զորով փարեցար . սուրբ ուսոյն
յորում բարձար . արփիաբուղխ
ստեանցն որով կերակրեցար . հո-
գիւնակ գեղոյն որում ցանկա-
ցար . անհամեմատ մաքրութեանն
որում հաճեցար . և սիրաբուն
աննդեանն որով զարգացար , գթա՛
յիս բազմամեղիս . և զամենայն թա-
կարդս վարմից չարին շրջապատեալ
զինեա՛ խղեա՛ աստուածային զօրու-
թեամբդ . և զանհամար պարտեացն
պատառեա զմուրհակ :

Աղօթք բարեբանութեան առ սուրբ կոյս Աստուածածին .

Ո՛վ ամենասքանչելի Աստուածածին պարծանք կուսութեան , Ճրագ պայծառագոյն քան զարեգակն . ո՛վ ջահ փայլուն քան զլուսին և զաստեղս . ո՛վ աթոռ քերովբէական բարձրագոյն քան զերկինս . ո՛վ Սերովբէ հողեղէն վեհագոյն քան զհրեշտակս , և պատուականագոյն քան զանմարմին դասս երկնայնոցն . ո՛վ պարծանք կուսանաց և փառք ամուսնացելոց :

Դու ես հարսն անսկզբնականին . դու ես մայր մարմնացելոյ միածնի որդւոյն Աստուծոյ . դու ես բնակարան հոգւոյն սրբոյ : Քեզ հաճեցաւ Աստուած ընդ մարդկային բնութիւնս՝ որ մեղաւ . քեզ բացաւ փակեալ դուռն դրախտին . քեզ օրհնեցաւ երկիր յանիծից նախա-

հօրն . քեզ անկեցաւ քաղցրութիւն և ճշմարտութիւն յերկրի . քեզ ծանեաք զԱստուած . քեզ անուանեցաք քրիստոնեայք . քեզ ընկալաք զապաշխարութիւն 'ի թողութիւն մեղաց : Քեզ միայն տուաւ համարձակութիւն բարեխօսել վասն ազգի մարդկան : Ո՛վ ոլորվայն աստուածակրող , մա՛յր աստուածածնող , աստուածաշնչալի ձեռք . աստուածահանդիսաւոր դիրկ . աստուածադիպաց ասինք . աստուածաբարձ բազուկք . աստուածամերձ բերան . աստուածահամբոյր շրթունք . աստուածահայեաց աչք . աստուածախօս լեզու . աստուածընկալ խորան . աստուածաբնակ տաճար . մի՛ մոռանար զխոստովանողս քո , որ քեզ փառաւորեմք զհայր և զորդի և զսուրբ հոգին , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Աղօթք առ սուրբ Աստուածածին.

Աղաչեմ զամենօրհնեալ տիրուհի զՄարիամ ծնողդ Աստուծոյ, դուստր արքային երկնաւորի, մայր սրբոց, միխիթարութիւն վշտացելոց, ճանապարհ մոլորելոց, փրկութիւն յուսացելոց 'ի քեզ։ Կոյս դողով յառաջ քան զծնունդն, կոյս ծընընդեամբ, և կոյս յետ ծննդեան։ Աղբիւր ողորմութեան և շնորհաց, աղբիւր գթութեան և քաղցրութեան, աղբիւր միխիթարութեան, փրկութեան և խաղաղութեան։ Բարեխօսեա՛ վասն իմ մեղաւորիս քոյոյ ծառայիս՝ առաջի քո միածնին. զի լուրով ողորմութեամբն և քոյին բարեխօսութեամբն շնորհեսցէ ինձ ողորմելոյս ժամանակ յառաջ քան զօր վախճանին իմոյ. որպէս զի մաքուր զղջմամբ, և ճշմա-

րիա խոստովանութեամբ, և լիակատար ապաշխարութեամբ քաւեցից զմեղս իմ։ Եւ ամենայն հաւատացելոց կեանք և հանգիստ կենդանեաց և մեռելոց՝ յաւիտենական։ և քեզ փառք յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

Աղօթք առ աւրն մեր Յիսուս Քրիստոս, բարեխօս ուղղով ըզառաքք Աստուածածինն։

Տէր իմ և Աստուած Յիսուս Քրիստոս, ածի զմտաւ և յիշեցի զի ողորմած ես և գթած՝ յետ բազում անօրէնութեան իմոյ և անյուսութեան, ապաւինեցայ 'ի մայրն քո Աստուածածինն, որ միշտ բարեխօսէ հաւատացելոցս։

Եւ տեսանեմք 'ի մարմնաւոր իշխանութիւնս, զի թագուհիք և մայրք թագաւորաց բազում մահապարտս ազատեն, և խնամով պահեն զա-

պաւինեալս 'ի նոսա։ Յաղագս այ-
սորիկ և ես վստահութեամբ աղա-
չեմ զքեզ ով ամենասուրբ կոյս, և
'ի խորոց սրտէ հառաչմամբ աղա-
չեմ զքեզ կոյս անարատ՝ տաճար
և աթոռ Աստուծոյ, կառք և առա-
գաստ աստուածութեանն, դուռն
երկնից և ճանապարհ արքայու-
թեանն. հանգիստ արդարոց, քա-
ւարան մեղուցելոց, յոյս լքելոց,
կեանք մահացելոց, զօրութիւն տը-
կարաց, վէմ ապաւինի, քաղաք ա-
պաստանի, պարիսպ ապաւինե-
լոց... և ամենայն գովեստի արժա-
նաւոր, բարեխօսեա՛ առ որդին քո,
զի ունիս համարձակութիւն, և
անյապաղ լսէ քեզ, և դու ես յոյս
մեր։

Արդ՝ որպէս մայր առ որդի ա-
ղաչեա՛ վասն իմ զՔրիստոս. զի թէ
բարկանայ ըստ մեղաց՝ յիրաւի է.
զի ոչ ունիմ լեզու և բերան՝ այլ
ինչ խնդրել 'ի Քրիստոսէ. բայց
յերես անկեալ պաղատիմք առ

մայրդ Աստուծոյ. հարկեա՛ զորդին քո, թախանձեա՛ բազկատարած մաղթանօք. հայցեա՛, յիշեա՛ զանՀառ ծնունդ քո, և զնունդ սուրբ կաթին քո. զգգուանս սուրբ ծընկաց քոց. զհամբոյր շրթանցդ, և զաղերս բերանոյդ. զի մի կոխան լիցուք թշնամւոյն, և մի ամօթ կրեսցուք 'ի չար գիւացն. այլ՝ ցընծասցուք յուսով 'ի փառս սուրբ երրորդութեան։ Զի թէպէտ և մեք խաբմամբ չարին կամայ և ակամայ մեղաք, այլ զքեզ ունիմք յոյս։ Աղերսեա՛ վասն հաւատոյս որ 'ի սուրբ երրորդութիւնն. և զորդին քո գաւանեմք հաւասար հօր և հոգւոյ, և զքեզ մայր և ծնող Աստուծոյ կենդանւոյ։ Եւ չարչարանաց նորա, խաչի և թաղմանն, և յարութեան, հաւատամք և երկիր պագանեմք։ Ի միւսանգամ գալըստեան նորա սպասեմք յուսով, և ակն ունիմք 'ի քո բարեխօսութիւնդ, զի օգնեսցէ և փրկեսցէ

զմեզ յամենայն նեղութեանց, և պահեսցէ 'ի Ճանապարհի՝ յելս և 'ի մուտս, 'ի կալ և 'ի գնալն. ըզդեւսն կապեսցէ, զսատանայ իւր չար խորհրդո

ծային առաքինութեանցն օտարա-
ցայ. դատապարտեալ եմ յԱստու-
ծոյ, ողբալի եմ հրեշտակաց, ծի-
ծաղելի դիւաց. յանդիմանիմ 'ի
խղճէ մտաց իմոց. նախ քան զվախ-
ճանն մեռեալ եմ. յառաջ քան
զդատաստանն դատապարտեալ եմ.
նախ քան զտանջանսն անձամբ զան-
ձըն իմ տանջեմ յանյուսութենէ
գործոց իմոց։

Վասն որոյ 'ի քոյդ միայն ա-
պաւինիմ 'ի ջերմագոյն օգնական-
նութիւնդ, ո՛վ տիրուհի սուրբ
Աստուածածին. որ պարտականս
եմ բիւր քանքարոյ, անառակս
էս որ անառակեցայ ընդ անա-
ռակին և զհայրենականն վատնեցի
զճոխութիւնն ընդ պոռնիկս, որ
պոռնկեցայ առաւել քան զպոռ-
նիկն, որ անօրինեցայ առաւել
քան զՄանասէ, որ և քան զմեծա-
տուն անդութ եղէ. ագահ ծա-
ռայս 'ի չարաչար և 'ի պիղծ խոր-
հրդոց, որ անկարդ գործովք աղ-

տեղն մոռածութեամբ և գարշելի բանիւք գանձեցի ինձ չարիս. որ յամենայն գործս նանրութեան պատրաստ եմ և յամենայն գործոց բարեաց օտարացեալ եմ, ողորմեա՛ց իմոյ նուաստութեանս, զթա՛ յիմ տկարութիւնս։

Մեծամեծ համարձակութիւն ունիս առ ծնեալն 'ի քէն՝ եթէ այլ ոչ ոք. յամենայնի կարող ես եթէ մայր Աստուծոյ. ամենայն ինչ հնարաւոր է քեզ՝ վեհագոյնդ ամենեցուն, և ոչ ինչ տկարանայ քեզ՝ միայն թէ կամիցիս։ Մի՛ անտես առներ զարտասուս իմ. մի՛ գարշիր 'ի հառաչանաց իմոց, մի՛ ապարտեր զխորհուրդս սրտի իմոյ. այլ մայրական քո աղաչանօքդ և համարձակութեամբդ զոր ունիս առ բարերար որդին քո և Աստուածն մեր՝ բարեխօսելով առ նորա անբաւ զթութիւնն, արժանաւորել զիս զանարժան ծառայս քո զառաջինն զայն վերսին զակըզ

բնատային գեղեցկութիւնն, և զան-
վայելչութիւն ախտից 'ի բաց մեր-
կանալ, աղատիլ 'ի մեղաց և ծա-
ռայել արդարութեան։ Ի բաց դը-
նել զպղծութիւն մարմնական ցան-
կութեանց, մերկանալ զհին մարդն
գործովք իւրովք և զգենուլ զնորն
արքութեամբ, միշտ մեռանիլ աշ-
խարհի և կեալ առաքինութեամբ։

Յուղեգնացութեան ուղեկից լեր
ինձ, 'ի նաւորդութեան նաւակ-
ցեա, և զդժնդակ զդեւսն որք 'ի
բարձանց մարտուցեալ են ընդ իս և
միշտ ջանան կորուսանել զիս վաղ-
վաղակի՝ վանեալ խորտակեացես.
'ի տքնութեան և 'ի հսկմունս զօ-
բացո զիս, 'ի տրտմութեան իմում
մխիթարեա զիս, 'ի կարճմտութենէ
փրկեա զիս. զցաւս և զտկարու-
թիւնս փարատեա յինէն, 'ի զրկա-
նաց զերծո՛ զիս, 'ի զոպարտութենէ
մարդկան փրկեա, փութապէս ժա-
մանեա ապրեցուցանել զիս յահա-
դին թշնամեաց իմոց 'ի ներքին և

յարտաքին, յերեւելեաց և յաներ-
րեւութիւց. որպէս զի ծանիցեն ա-
մենեքեան թէ ում ծառայիցեմ։

Այո առաւել քարի տիրուհի,
լուր աղաչանաց իմոց, և մի յամօթ
առներ զիս 'ի յուսոյ իմոյ, որ յոյսդ
ես ամենայն ծագաց երկրի. զջե-
ռու�մարմնոյ իմոյ շինչո՛, զծփուումն
և զմրրկումն հոգւոյ իմոյ դադարե-
ցո. զանկարգ բարկութիւն սրտի իմոյ
խաղաղացո. զյարատհայեցութիւն
աչաց իմոց հանդարտացո, զամբար-
հաւաճութիւն նանիր մտաց իմոց
ջնջեա, զդիշերային երեւմունս և
զարհաւիրս այսոց պղծոց հալածեա
յինէն, և զորբուսորէ անմաքուր
խորհուրդս 'ի սրտէ իմմէ հեռացո։

Յորդորեա՛ զմիտս իմ և զլեզուս
խօսել զգտակարն. ուստ՛ զաչս իմ
հայել ուղիղ առաքինութեամբ.
զոտս իմ արա անխոտոր ընթանալ
'ի շաւիղս որդւոյ քո և Աստուծոյ.
զձեռս իմ 'ի բարեգործութիւն արբ-
բել յորդորեա. որպէս զի արժա-

նապէս համարձակեցայց համբառ-
նալ առ Բարձրեալն :

Մաքրեա զբերան իմ զի կարդա-
ցից զՀայրն ամենատուրբ . բայց ըզ-
լսելիս իմ լսել զդատապէս և իմա-
նալ մտադիւրութեամբ զքաղցրա-
գոյնն քան զխորիսխ մեղու զբանս
աստուածային գրոց :

Տուր ինձ ժամանակ ապաշխարու-
թեան և խորհուրդ դարձման , և մի
թողուր մինչեւ իսպառ , այլ փրկեա
զիս յանշէջ հրոյն և 'ի յաւիտենից
տանջանացն և յանմահ մահուանէն ,
ամենայնիւ մերձ կալով քո ինձ 'ի
ժամ որոշման եղկելի հոգւոյս 'ի
գարշելի մարմնոյս :

Զառաջիկայ և զապառնին ժա-
մանակս կենցաղավարութեան իմոյ
թեթեւագոյնս գործելով յինէն ,
զանհանդուրժելի նեղութիւն և
զանձառելին փարատելով յինէն .
յանմխիթարելի վիշտս անձկու-
թեան մխիթարիչ լեր ինձ , յաղ-
ջամիջին խաւարին դիւացն փրկե-

լով զիս։ Ի դառնագոյն և 'ի բռնակալ մաքսապետէ խաւարասէր իշխանին օգոյս այսորիկ զերծո զիս։ Զձեռագիր յանցանաց իմոց ջնջելով, Աստուծոյ բնակարան զիս կազմելով ընդ աջմէ նորա կալով հանապազ, յահագին և յաններելի տանջանացն փրկելով, և մշտնջենաւոր և անապառ բարեացն ժառանգորդս զիս առնելով։

Զայս քեզ խոստովանութիւն մատուցանեմ, ով տիրուհի Աստուածածին, որ ես լոյս խաւարեալ աչաց իմոց և մխիթարիչ անձին իմոյ. որ ես Աստուծով յոյս իմ և առ Աստուած բարեհաճող։ Ընկալ առ յինէն զխոստովանութիւնս, և մաքրեա զիս յամենայն աղտեղութենէ հոգւոյ և մարմնոյ, և արժանաւորեա զիս զանարժանս այժմ և հանապազ՝ անդատապարտաբար հաղորդել յանարատ մարմնոյ և յարենէ որդւոյ քո և Աստուծոյ, և 'ի հանդերձելումն

երկնային ընտրելեացն յարքայութեանն Աստուծոյ արժանի լինելու ամենայն ուրախացելոցն բնակութիւնքն եղեն 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ վայել է փառք և պատիւ և երկրպագութիւն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

1.-.504.